

**ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ
ՆՅՈՒԹԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՂԹԱՅԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈՒՇԱԳԻՐ.**

ՉՈՐԱՑՐԱԾ ՄԻՐԳ ՈՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

**ՄԱՅԻՍ
2013**

Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություններ |
Համաշխարհային բանկի խումբ



Համագործակցելով՝



© Միջազգային ֆինանսական կորպորացիա, 2013:

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

2121 Փենսիլվանիա պողոտա, հյուսիս-արևմուտք,

Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 20433, ԱՄՆ

Կայք: www.ifc.org

Սույն աշխատությունում ներկայացված նյութի հեղինակային իրավունքները պաշտպանված են: Առանց թույլտվության, սույն աշխատությունն ամբողջությամբ կամ դրա որևէ մասի կրկնօրինակումը և (կամ) տարածումը կարող է համարվել գործող օրենսդրության խախտում: IFC-ն խրախուսում է իր աշխատանքների տարածումը և սովորաբար արագ կերպով տրամադրում է աշխատության մասերի վերարտադրման թույլտվությունը, իսկ կրթական և ոչ առևտրային նպատակներով վերարտադրման դեպքում՝ անվճար թույլտվությունը՝ պայմանով, որ կպահպանվեն մեր կողմից ողջամտորեն պահանջվող վերագրումները և ծանուցումները:

IFC-ն չի երաշխավորում սույն աշխատության մեջ ներառված բովանդակության կամ դրանում նկարագրված եզրակացությունների կամ դատողությունների ճշգրտությունը, արժանահավատությունը և ամբողջականությունը և չի կրում ոչ մի պատասխանատվություն կամ պարտավորություն՝ բովանդակության մեջ տեղ գտած բացթողումների կամ սխալների (ներառյալ՝ ուղղագրական կամ տեխնիկական սխալների՝ առանց բացառությունների) կամ դրա արժանահավատության համար: Սույն աշխատությունում որևէ քարտեզի վրա ցուցադրված սահմանները, գույները, անվանումները և այլ տեղեկատվությունը չեն արտահայտում Համաշխարհային բանկի կարծիքը՝ որևէ տարածքի իրավական կարգավիճակի կամ նման սահմանների հաստատման կամ ընդունման վերաբերյալ: Սույն աշխատությունում ներկայացված բացահայտումները, մեկնաբանությունները և եզրահանգումները պարտադիր չէ, որ արտացոլեն Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների կամ նրանց կողմից ներկայացվող կառավարությունների տեսակետները:

Սույն աշխատության բովանդակությունը նախատեսված է միայն ընդհանուր տեղեկատվական նպատակների համար և նպատակ չի հետապնդում տրամադրել իրավական, արժեթղթերի կամ ներդրումների գծով խորհուրդ կամ կարծիք՝ որևէ ներդրման նպատակահարմարության վերաբերյալ կամ որևէ տեսակի միջնորդություն: IFC-ն կամ նրա հետ փոխկապակցված անձինք կարող են կատարել ներդրումներ, տրամադրել այլ խորհրդատվություն կամ ծառայություններ, կամ ունենալ ֆինանսական շահ որոշ ընկերություններում և կողմերում (ներառյալ՝ սույն աշխատությունում նշվածները):

Իրավունքների և լիցենզիաների, այդ թվում՝ հարակից իրավունքների վերաբերյալ բոլոր մյուս հարցերը պետք է ուղղվեն IFC-ի կորպորատիվ հարաբերությունների բաժին՝ 2121 Փենսիլվանիա պողոտա, հյուսիս-արևմուտք, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 20433, ԱՄՆ հասցեով:

Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) միջազգային կազմակերպություն է, որը ստեղծվել է իր անդամ երկրների միջև Համաձայնագրի հոդվածների համաձայն և հանդիսանում է Համաշխարհային բանկի խմբի անդամ: Բոլոր անվանումները, խորհրդանշանները և ապրանքային նշանները պատկանում են IFC-ին, և առանց IFC-ի գրավոր համաձայնության ոչ մի նման նյութ չի կարող օգտագործվել ոչ մի նպատակի համար: Բացի այդ, “Միջազգային ֆինանսական կորպորացիա” և “IFC”-ն IFC-ի գրանցված ապրանքային նշաններն են և պաշտպանված են միջազգային օրենսդրությամբ:

Գյուղարտադրանքի արտահանման նյութատեխնիկական (ՆՅՈՒՏ) ապահովման շղթայի վերաբերյալ սույն հուշագիրը հրատարակվել է Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի կողմից: Ծրագիրը նախաձեռնվել է Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայությունների կողմից և իրականացվում է Համաշխարհային բանկի խմբի անդամ՝ IFC-ի կողմից:

Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավմանը՝ տեսչական ստուգումների, հարկային, արտաքին առևտրի ու սննդամթերքի անվտանգության ոլորտներում կարգավորման արդյունավետությունը բարձացնելու և գործարարությամբ զբաղվելու ժամանակն ու ծախսերը նվազեցնելու միջոցով:

Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայությունների մասին

Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայությունները աջակցում են կառավարություններին բարեփոխումներ իրականացնելու՝ գործարար միջավայրը բարելավելու և ներդրումներ խրախուսելու ու ապահովելու նպատակով, դրանով իսկ նպաստելով մրցունակ շուկաների աճին և աշխատատեղերի ստեղծմանը:

Դոնոր գործընկերներ

Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրին ֆինանսական աջակցություն են ցուցաբերում Ավստրիայի ֆինանսների նախարարությունը և Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությունը:

Ծրագրի դոնոր գործընկերների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

Ավստրիայի ֆինանսների նախարարություն՝ <http://english.bmf.gv.at>

Նիդերլանդների արտաքին գործերի նախարարություն՝ www.minbuza.nl/en/home

Երախտիքի խոսք

Սույն հուշագիրը պատրաստել են Գագիկ Գաբրիելյանը (Միջազգային առևտրի հարցերով խորհրդատու, IFC-ի՝ Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր) և Անկուր Հուրիան (Ներդրումային միջավայրի վարչության՝ միջազգային առևտրի ՆՅՈՒՏ ապահովման մասնագետ), 2013 թ. մարտ-մայիս ժամանակահատվածում: Հայաստանում IFC-ի ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիրը ղեկավարում է Արսեն Նազարյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	5
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԵՂԱՆԱԿՆԵՐ (ՄԵԹՈԴ).....	6
II. ԱՍՓՈՓԱԳԻՐ.....	9
III. ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ.....	13
A. ՆՅՈՒՏ ԵՂԹԱՆ.....	13
B. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ և ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՔԱՆԱԿՆ ՈՒ ՏԵՄԱԿԱՆԻՆ.....	13
C. ՀԱՎԱՔՄԱՆ և ՍՏԱՆԴԱՐՏ ԱՊՐԱՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԵՐ.....	18
D. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ՊԱՀՊԱՆՄԱՆ և ԱՐԺԵՔԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ.....	20
E. ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ.....	21
F. ՄԱՔՍՍՅՈՒՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	22
G. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	22
H. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ.....	24
I. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԴՐԱՄԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ԱՅԼ ՀԱՐՑԵՐ.....	26
III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ.....	27
IV. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	31
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՔԱՐՏԵԶ.....	32
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԲՈՒՍԱՍՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ.....	33
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ.....	33
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ.....	34
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՍԱՆՊԻՆ՝ ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ.....	37
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԵՄ –ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՐՈՇ ՊԱՀԱՆՋՆԵՐ.....	42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԱՀ	Ազատ առևտրի համաձայնագիր
ԱԴՆՀ	Ապրանքների դասակարգման ներդաշնակեցված համակարգ
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԱՏԳԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկ
Առաքել	Առաքող
Արտո	Արտահանող
ԲՈՒՍ տեսչություն	Բուսասանիտարական տեսչություն
Գեղամ	Գյուղատնտեսական արտադրանք արտադրող
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՆԱ	Երկակի նշանակության ապրանք
ԾԵՀ	Ծագման երկրի հավաստագիր
ԿՈՐ	Կառավարության որոշում
ՀԱԱՊ	Հայաստանի առևտրա-արդյունաբերական պալատ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶԱԻ	Հայաստանի չափագիտության ազգային ինստիտուտ
ՀՍԱԻ	Հայաստանի ստանդարտների ազգային ինստիտուտ
ՀՍԱԾ	Հայաստանի Մենդամթերքի անվտանգության ծառայություն
ՀՄԿ	Հսկողության սահմանային կետ
ՄՄ	Մաքսային միություն
Ներսո	Ներմուծող
ՍԱՄԿ	Սահմանային մաքսային կետ
Սեպուհ	Սպառող
Չինար	Չիր արտադրող
Վերդի	Վերավաճառող (մարնաձախ)
ՓՔ	Փորձաքննություն

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղարտադրանքի արտահանման նյութատեխնիկական ՆՅՈՒՏ ապահովման շղթայի վերաբերյալ սույն հուշագիրը պատրաստվել է Հայաստանում Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) ներդրումային միջավայրի բարեփոխում ծրագրի (ՆԵՄԻԲ ծրագիր) շրջանակում: ՆԵՄԻԲ ծրագրի նպատակն է գործարարների համար պարզեցնելու կանոնակարգերն ու ընթացակարգերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ագրոբիզնեսի հատվածին: Ծրագիրն ունի մի քանի ուղղություններ, ներառյալ արտաքին առևտրի ընթացակարգեր, հարկային, տեսչական ստուգումներ, սննդամթերքի անվտանգություն:

ՆԵՄԻԲ ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը նպատակ ունի բացահայտելու և մատնանշելու արտաքին առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայում առկա խոչընդոտներն ու առաջարկելու լուծումներ դրանք նվազեցնելու կամ վերացնելու համար: Այդ նպատակով ծրագրի անձնակազմը պատրաստել է Հայաստանում ներմուծման և արտահանման գործընթացի մանրամասն քարտեզներ՝ համագործակցելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքային ծառայության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ: Այդ քարտեզները ծառայել են որպես արդյունավետ գործիք խոչընդոտների հատկորոշման, ինչպես նաև կարճաժամկետ և միջնաժամկետ բարեփոխումների մշակման համար: Դրանց օգնությամբ ՀՀ կառավարությունն արդեն ընդունել և իրականացրել է մեծ թվով բարեփոխումներ (հրավական փաստաթղթեր)՝ ուղղված մաքսային և տեխնիկական հսկողության ընթացակարգերի պարզեցմանը՝ կրճատելով արտահանման և ներմուծման գործարքների համար պահանջվող ժամանակը և ծախսերը: Ծրագիրը նաև օգնեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը պատրաստել վեբ-կայքում տեղադրել ինտերակտիվ քարտեզ ուղեցույց գործարարների համար, որտեղ քայլ առ քայլ ներկայացված են արտաքին առևտրի ընթացակարգերը: Քարտեզը տեղադրված է և հասանելի է Հայկական զարգացման գործակալության պաշտոնական վեբ-կայքում՝ www.ada.am.

ՀՀ կառավարությունը դիմել է ՆԵՄԻԲ ծրագրին պատրաստելու նաև երկու ապրանքատեսակների արտահանման ՆՅՈՒՏ շղթայի մանրամասն քարտեզ՝ արտահանման խոչընդոտների բացահայտման և դրանց համար լուծումների առաջարկման նպատակով: Սույն հուշագիրը երկրորդն է և վերաբերում է ագրոբիզնեսի արտադրանքի, մասնավորապես, չորացրած միրգ ու բանջարի արտահանմանը: Նախորդը վերաբերում էր թարմ միրգ ու բանջարի արտահանմանը:

Նպատակներ և եղանակներ (մեթոդ)

Սույն Հուշագրում հատկորոշվում են Հայաստանից գյուղարտադրանքի, մասնավորապես, միրգ ու բանջարեղենի չիրի արտահանման ՆՅՈՒՏ շղթայում առկա մասնակիցներն ու գործընթացները, խնդիրներն ու դժվարությունները, և ներկայացվում են առաջարկություններ բարեփոխումների և հետագա քայլերի վերաբերյալ:

Հուշագիրը ներկայացնում է գյուղարտադրանքի արտահանման ՆՅՈՒՏ ապահովման շղթան՝ 2013 թ. սկզբի դրությամբ: Հուշագրում ընդգրկված վերլուծությունը և առաջարկությունները հիմնված են առկա գործընթացների և ընթացակարգերի դիտարկման, ինչպես նաև ներմուծման ու արտահանման ընթացակարգերում

ներգրավված տարբեր շահագրգիռ կողմերի հետ անցկացված հարցազրույցների վրա: Հուշագրի շրջանակը սահմանափակ է¹, և չի ներկայացվում դրանում Հայաստանից գյուղարտադրանքի արտահանման ՆՅՈՒՏ շղթայի համապարփակ պատկեր: Հուշագիրը նպատակ ունի մատնանշելու շղթայում առկա հիմնական խնդիրները. հատուկ ուշադրություն է դարձվում փաստաթղթային և ընթացակարգային պահանջների պարզեցմանը, դրանց համար պահանջվող ժամանակի կրճատմանը, ինչպես նաև ՆՅՈՒՏ ապահովման ենթակառուցվածքային և տեխնիկական զինվածությանն առնչվող խնդիրներին: Հուշագրում մաքսային ձևակերպումների ընթացակարգերի հետ միասին դիտարկվում են տեխնիկական հսկողության ընթացակարգերը (ինչպիսիք են բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության հսկողությունը, ծագման երկրի հավաստագրումը):

Հանդիպումներ ու քննարկումներ են անցկացվել միջազգային առևտրի գործընթացում ներգրավված պետական, հասարակական, միջազգային և մասնավոր կազմակերպությունների հետ, ներառյալ՝ մաքսային և տեխնիկական հսկողության մարմինները (բուսասանիտարական և անասնաբուժական հսկողության, ապրանքի ծագման հավաստագրման), արտահանողներն ու ներմուծողները, առաքողներն ու փոխադրողները, մաքսային միջնորդները (բրոքերներ), մասնագիտական միությունները, առևտրին առնչվող ծրագրեր իրականացնող միջազգային նվիրատու (դոնոր) կազմակերպությունները: Օգտագործվել են քննարկումների իրականացման տարբեր ձևաչափեր (ֆորմատներ), մասնավորապես, առանձին հարցազրույցներ, քննարկումներ առանձին խմբերի հետ, համատեղ աշխատանքային ժողովներ ու կլոր սեղաններ տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Զուգահեռաբար, այցելություններ են կատարվել մաքսային պահեստներ, մաքսային կետեր և այլ համապատասխան վայրեր՝ տեսնելու և արտացոլելու իրականում տեղի ունեցող գործընթացն ու ընթացակարգերը, ենթակառուցվածքներն ու հարմարությունները: Կարևոր է նշել, որ դիտարկվել են նաև քննարկվող ընթացակարգերը կարգավորող օրենքներն ու իրավական այլ փաստաթղթերը:²

Արտաքին առևտրի ՆՅՈՒՏ շղթայի վերլուծությունը հիմնված է 1–ին պատկերում ներկայացված տրամաբանական կառուցվածքի վրա: Այն ներառում է գյուղարտադրողի այգուց մինչև արտահանման շուկա ընկած քայլերը: Վերլուծությունը հիմնվում է չորս սյունների վրա. (1) կանոնակարգեր, որոնցով կարգավորվում է ՆՅՈՒՏ շղթան, ներառյալ՝ երկրում գործող և միջազգային պահանջները, այդ թվում՝ հղումներ միջազգային լավագույն գործելակերպերին, (2) իրականում տեղի ունեցող ընթացակարգերի և գործելակերպեր, (3) ենթակառուցվածքների առկայություն և օգտագործում, (4) հաստատություններ, դրանց դերն ու գործառնությունները:

Հուշագրի 2–րդ բաժնում ներկայացված են կարևոր դիտարկումներ գյուղարտադրանքի արտահանման և ներմուծման ընթացակարգերի և փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես նաև որոշ հնարավոր բարեփոխումներ: Բաժինն ունի չորս ցրած միրգ ու բանջարեղենի արտահանման քայլերը նկարագրող քարտեզներ՝ 1–ին հավելված: 3–րդ բաժնում ներկայացված են ՆՅՈՒՏ շղթայի հետագա բարելավմանն ուղղված առաջարկություններ:

¹ Հուշագիրը նպատակ չունի վերլուծելու արտաքին առևտուրը կարգավորող իրավական ակտերը:

² Իրավական ակտերը դիտարկվել են ավելի ամբողջականորեն հասկանալու գործող ընթացակարգերը, այսինքն՝ դա չի կատարվել որպես իրավական ակտերի ուսումնասիրություն կամ գնահատում:

ՊԱՏԿԵՐ 1. Առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայի վերլուծության հենք



II. ԱՄՓՈՓԱԳԻՐ

A. ՆՅՈՒՏ շղթան

ՆՅՈՒՏ շղթան դիտարկվել է այն տարբերակի համար, երբ չրագործը (Չինարը) նաև արտահանող է, սակայն չիր արտադրելու համար հուսքը ձեռքբերում է գյուղարտադրողից:

B. Արտադրության և արտահանման քանակն ու տեսականին

Ի՞նչ չրեր են արտադրվում.

մրգերից՝ ծիրան, սալոր, դեղձ, կեռաս, թուզ, արքայախնձոր, խնձոր և տանձ, բանջարեղենից՝ լոլիկ, կանաչ լոբի, բադրիջան, այլ՝ համեմունքներ, կանաչիներ, պղպեղ, ուրց:

Որքա՞ն է տարեկան արտադրության ծավալը. տարեկան ընդամենը մոտ 1'500 տոննա:

Ինչպիսի՞ արտադրական կարողություններ կան. 250-260 չորանոցներ, որոնցով կարելի է ներկա արտադրության ծավալները մի քանի անգամ ավելացնել: Արտադրությունը կենտրոնացված է գլխավորապես Արարատյան հարթավայրում: Չիրի ճյուղում գործում է «Հայաստանի չորացված մթերք արտադրողների ասոցիացիան»:

Ի՞նչ է արտահանվում. Քիչ, թե շատ առևտրային արտահանման առարկա են ծիրանը, տարբեր մրգերի չրերի խառնուրդները և համեմունքները: Մյուս մրգերի և բանջարեղենի չրերը (մասնավորապես, լոլիկի) արտահանվում են փոքր քանակներով:

Ինքա՞ն է տարեկան արտահանման ծավալը. 2011թ. արտահանվել է ընդամենը 0.8 տոննա բանջարեղենի չիր (\$ 6'700 արժողությամբ) և ընդամենը 41.3 տ մրգի չիր (\$ 121'700 արժողությամբ): Մրգերի մեջ 11 տոննան ծիրանի չիր էր, իսկ մոտ 30 տոննան այլ մրգերի՝ հավանաբար խառնուրդ չիրեր: 2011 թ. արտահանվել է մոտ 48 տոննա համեմունք, որից 40.2 տոննա (\$275'000 արժողությամբ) սև պղպեղ և մոտ 8 տոննա այլ համեմունքներ (\$121'000 արժողությամբ)՝ գլխավորապես ուրց:

Չիրի ժամանակակից արդյունաբերական հիմունքերով արտադրությունը, ըստ էության, զարգացման նախնական շրջանում է: Գերակշռում են տնայնագործ փոքր արտադրողները: Տոննաներով չիր արտադրող ընկերություններից շուկայում հայտնի և արտահանման մեջ ընդգրկված են մոտ երկու տասնյակը:

Չրերի Արտահանումը դեռ կանոնավոր առևտրային հիմքերի վրա չէ. Հայաստանից կատարվում է գլխավորապես անկանոն և փոքր խմբաքանակներով արտահանում՝ մի քանի տասնյակ կիլոգրամից մինչև մի քանի հարյուր կիլոգրամ:

Արտահանման գործարքների փոքր թիվն ու անկանոնությունը դժվարացնում են արտահանման ՆՅՈՒՏ ապահովման շղթայում որոշ խնդիրների ու բարելավման հնարավորությունների հասկոթոշումը: Գործարքների սակավության պատճառով գործարարները որոշ դեպքերում չեն կարևորում ընթացակարգերի վրա ծախսած ժամանակն ու դրանց բարդությունը կամ պարզությունը:

C. Հավաքման և ստանդարտ ապրանքի ապահովման հարցեր

Կարճ ժամկետում հումքի պակասի խնդիր չկա. չրի արտադրությունը կարելի է մի քանի անգամ ավելացնել եղած հումքի հաշվին, սակայն հետագայում զգալի առևտրային արտահանում կազմակերպելու համար անհրաժեշտություն կլինի մեծացնելու առևտրային սորտերի արտադրությունը, հատկապես ծիրանի:

Հումքի և պատրաստի չիրի հավաքման և կայուն ու համասեռ որակի ապահովման հետ կապված խնդիրներ. Թարմ միրգ ու բանջարեղենի և չիրի արտադրության մասնատված կառուցվածքը բարդացնում և դժվարացնում է փաթեթավորման, փոխադրման, տեղափոխման, վաճառքի կազմակերպման և ՆՅՈՒՏ ապահովման գործը: Հայաստանում թարմ մրգի հավաքման, տեսակավորման և վաճառքի կենտրոնացված պահեստ կամ վաճառակետ չկա. դեռ չի ձևավորվել տարբեր պատճառներով: Այդ պարագայում, արտահանման ՆՅՈՒՏ ապահովման տեսակետից կայուն և համասեռ որակի ապրանքի կուտակումը դառնում է դժվար խնդիր:

Ներկա փուլում կարևոր է չրագործության ճյուղի և արտահանման հետագա զարգացման արդյունավետ ռազմավարական ուղիների որոշումը, ինչի համար համար կարևոր է շահագրգիռ կողմերի միջև (ինչպես մասնավոր, այնպես էլ պետական) գործուն երկխոսության կազմակերպումն ու իրականացումը: Գործարարների շրջանում քննարկվող հնարավոր ուղիներ են.

- Խոշոր արտադրողների (որոնք նաև նաև արտահանող են) ձևավորումը,
- Մասնավոր հատվածի կողմից կամ պետություն-մասնավոր համագործակցությամբ չիրի հավաքման կենտրոնի ստեղծումը
- Արտադրողների կազմն ու չափը մնում է մոտավորապես այնպիսին, ինչպիսին կա: Արտադրողները (*Չորացված մթերք արտադրողների ասոցիացիան*) ձևավորում է ստանդարտներ և նպաստում է արտադրողների կողից դրանց կիրառմանը:

D. Ենթակառուցվածքների, պահպանման և արժեքի ավելացման հարցեր

Սառնարանային տնտեսությունների պակասի խնդիր չկա կարճ ժամկետում. Համեմատաբար խոշոր չիր արտադրողներն ունեն իրենց սառնարանային տնտեսությունները, որոնց դեռ մոտ կեսն է օգտագործվում: Կարճաժամկետ ապագայում սառնարանային տնտեսությունների պակաս չի լինի, սակայն հետագայում արտահանման ծավալների նշանակալի աճի դեպքում կարող է դրանց պակաս առաջանալ:

Չրերի փաթեթավորումը դեռ կատարելագործված չէ. Հայաստանում կատարելագործված փաթեթավորման եղանակները տարածված չեն. մեծամասամբ կատարվում է պարզ փաթեթավորում, առանց հերմետիկ փաթեթավորման և չիրի պահպանման ժամկետը երկարացնող հատուկ նյութերի (ազոտ գազի) ավելացման: Չկատարելագործված փաթեթավորման տեխնոլոգիաների կիրառությունը կարճացնում է չիրի պահպանման ժամկետը, վատ է անդրադառնում չիրի տեղափոխելիության և անվտանգության վրա, այդպիսով նվազեցնելով դրա մրցունակությունը: Ըստ գործարարների՝ բարձրակարգ փաթեթավորման սարքը կպահանջի ընդամենը \$10'000-\$15'000 ներդրում:

E. Տեղափոխման հետ կապված հարցեր

Մասնաբանով բեռնատարների առկայության խնդիր չկա. Հաշվի առնելով չիրի արտահանման գործարքների փոքրածավալությունը, բեռնատարների առկայությունը դեռևս խնդրահարույց չէ Արտոյի համար:

Խառնակուտակ (գրուպաժով) բեռների ձևավորումը և առաքումը խնդրահարույց է. Արտահանման փոքր ծավալների պատճառով իմաստ չունի ամբողջ բեռնատար մեքենա վարձել, և Արտոն ստիպված է լինում իր բեռը խառնել այլ արտահանողների բեռների հետ, որպեսզի բեռնատարը լրիվ բարձվի: Խառնակուտակ բեռով (այսպես կոչված՝ *գրուպաժով*) արտահանելը կապված է մի շարք դժվարությունների հետ.

- բեռնատար գտնելը դժվար է, և հաճախ հարկ է լինում երկար սպասել դրա համար. Այդպիսով Արտոյի համար դժվարանում է ժամանակին ապրանք առաքելը:
- խառը բեռի արտահանումը ներառում է մաքսային հայտարարագրման և մաքսագերծման (երբեմն նաև բուսասանիտարական) ավելի բարդ ընթացակարգեր.
- գրուպաժի դեպքում փոխադրողը հաճախ բեռը հենց նշանակման վայր չի հասցնում, այլ կարող է մաքսագերծում և բեռնաթափում կատարել նշանակման վայրից հեռու:

F. Մաքսային հսկողության հարցեր

Մաքսային ձևակերպումների հետ կապված խնդիրներ չեն նկատվել:

G. Տեխնիկական հսկողության հարցեր

Չիրը ենթակա է երկու տեսակի՝ բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության հսկողության:

Չիր արտահանողները բուսասանիտարական հսկողության ընթացակարգը խնդրահարույց չեն համարում:

Սննդամթերքի անվտանգության կամ սանիտարական հսկողության ընթացակարգը հստակ չէ. նմանատիպ հավաստագրում կարող են կատարել ինչպես Սննդամթերքի անվտանգության ծառայությունը, այնպես էլ Ստանդարտացման ազգային ինստիտուտը:

H. Անվտանգության և որակի ապահովման հետ կապված հարցեր

Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել արտադրության մեջ միջազգայնորեն ընդունված պատճառ գործելակերպեր և անվտանգության կառավարման առաջավոր համակարգեր ներդնելուն: Անվտանգության և որակի ապահովման հետ կապված կան մի քանի ասպարեզներ, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում են առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայի աշխատանքի վրա.

- Սննդամթերքի անվտանգության պահանջներ և դրանց համապատասխանությունը միջազգայնորեն և(կամ) արտահանման երկրներում գործող պահանջներին.

- Արտադրողների կողմից Պատշաճ արտադրական գործելակերպի կամ պրակտիկայի (GMP-Good Manufacturing Practice), պատշաճ հիգիենայի գործելակերպի (GHP- Good Hygiene Practice), ինչպես նաև սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի (HACCP- Hazard Analysis and Critical Control Point) կիրառությունը:
- Միջազգայնորեն ընդունված ստանդարտների կիրառությունը, որոնք սահմանում են որակական պահանջներ, ինչպես, օրինակ՝ խոնավության պարունակությունը կամ չրերում թույլատրելի արատները.
- Հայաստանյան հավաստագրերի ճանաչումը արտահանման երկրների կողմից:

I. Ռազմավարության, դրամի մատչելիության և այլ հարցեր

Ագրոբիզնեսի արտահանման խթանման ռազմավարության բացակայությունը նշանակում է, որ միավորող հենք չկա արտահանման խոչընդոտների նվազեցման կամ վերացման համար: Դա կարող է նաև դժվարացնել արտահանում խթանելու համար առաջնահերթությունների սահմանման գործը: Ռազմավարությամբ պետք է, այլոց հետ նաև, հասցեագրվեն հայեցակարգային այնպիսի հարցեր, ինչպես.

- Հումքի և պատրաստի արտադրանքի կուտակման արդյունավետ գործակառույցների զարգացում.
- Արտադրական, փաթեթավորման, սառնարանային կարողությունների զարգացում:

Ինչպես նշվել է վերևում, չրագործության ճյուղի և արտահանման հետագա զարգացման արդյունավետ ուղու կամ ուղիների որոշման համար կարևոր է շահագրգիռ կողմերի միջև (ինչպես մասնավոր, այնպես էլ պետական) գործուն երկխոսության կազմակերպումն ու իրականացումը:

Դրամական միջոցների մատչելիության խնդիր. Չինարը և Արտոն դժվարությունների են հանդիպում ընթացիկ կապիտալի (աշխատող դրամի) պակասի պատճառով, որովհետև Գեղամին վճարում է կանխիկ դրամով: գործարարները նշում են նաև, որ դժվար է դրամ գտնել փաթեթավորման սարքավորումներ, սառնարանային տնտեսության, և արտադրական այլ սարքավորումներ ձեռքբերելու համար

Սույն հուշագրում ներկայացված չեն մի շարք խնդիրներ և հնարավորություններ, որոնք ընդհանուր են թարմ և չորացրած մրգերի համար և արդեն քննարկվել են «Հայաստանից գյուղատնտեսական արտահանման նյութա-տեխնիկական ապահովման շղթայի վերլուծություն. թարմ միրգ ու բանջարեղենի արտահանում» հուշագրում (նշված են ստորև):

III. ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

A. ՆՅՈՒՏ շղթան

Հաշվի առնելով հայաստանյան իրողությունները, դիտարկվող ՆՅՈՒՏ շղթան սկսվում է բերքահավաքի փուլից և ավարտվում արտահանման շուկայում մաքսազերծմամբ: Այնուամենայնիվ, վերլուծության մեջ անդրադարձ է կատարվել նաև մինչև բերքահավաքը հանդիպող որոշ հարցերի (օրինակ, չիրի արտադրության համար հարմար սորտերի ընտրություն, թույների և պարարտանյութերի օգտագործում թարմ միրգ ու բանջարի արտադրության ժամանակ): **ՆՅՈՒՏ շղթան դիտարկվել է այն տարբերակի համար, երբ չրագործը նաև արտահանող է, սակայն չիր արտադրելու համար հումքը ձեռքբերում է գյուղարտադրողից:**

B. Արտադրության և արտահանման քանակն ու տեսականին

Հայաստանում չիր արտադրվում է մասնավորապես հետևյալ մրգերից՝ ծիրան, սալոր, դեղձ, կեռաս, թուզ, արքայախնձոր, խնձոր և տանձ, և բանջարներից՝ լոլիկ, կանաչ լոբի, բադրիջան: Չորացվում են նաև տարբեր կանաչիներ և համեմունքներ: Միրգ ու բանջարի չիրի արտադրությունը կենտրոնացված է գլխավորապես Արարատյան հարթավայրում՝ Արարատի և Արմավիրի մարզերում, հատկապես ծիրանի, դեղձի, սալորի և կեռասի չիրերի:

Թուզի և արքայախնձորի չիրի արտադրության կենտրոններ են Սյունիքում՝ Մեղրու շրջանը, Տավուշի մարզում՝ Բերդի շրջանը և Լոռու մարզում՝ Ալավերդու շրջանը (որտեղ արտադրվում է նաև դեղձ, կեռաս, սալոր): Արագածոտնի մարզում (Աշտարակի շրջանում)՝ համեմատաբար մեծ է խնձորի, ծիրանի, կեռասի չիրի արտադրության կշիռները:

Սալորի արտադրությունը կենտրոնացած է Արարատյան հարթավայրում (Արմավիրի մարզ) և Տավուշի և Լոռու մարզերում:

Չիրի արդյունաբերական արտադրությունը զարգացման նախնական փուլում. Հայաստանում չոր միրգ ու բանջարի ժամանակակից արդյունաբերական հիմունքերով արտադրությունը, ըստ էության, զարգացման նախնական շրջանում է: Գերակշռում են տնայնագործ փոքր արտադրողները, որոնց մեջ քիչ թե շատ առևտրային քանակ արտադրողների թիվը, ըստ փորձագիտական գնահատականների, մի քանի հազար է. նրանք արտադրում են տարեկան մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր կիլոգրամ չիր: Տոննաներով չիր արտադրում են մի քանի տասնյակ ընկերություններ, որոնցից շուկայում հայտնի և արտահանման մեջ ընդգրկված են մոտ երկու տասնյակը:³

Չիրի ճյուղում գործում է «Հայաստանի չորացված մթերք արտադրողների ասոցիացիան»:

³ Տոննաներով չիր արտադրողներ են, մասնավորապես, «Չիր», «Մաթենի», «Նոր այգի», «Զիլ», «Armenian Dried Fruits», «Վայք գրուփ» ընկերությունները:

Հայաստանում արտադրվող չիրի ծավալը, ըստ գործարարների և փորձագետների գնահատականների կազմում է **մոտ 1'500 տոննա**: Չիրի մեծ մասը սպառվում է ներքին շուկայում: Արտահանվում է արտադրանքի փոքր մասը միայն:

Ըստ Չրագործների ասոցիացիայի տվյալների՝ Հայաստանում ներկայում առկա են 250-260 չորանոցներ, որոնց կեսը կամ ավելի կենտրոնացած է Արմավիրի մարզում:

Ինչ չրեր են արտահանվում Հայաստանից. Հայաստանից արտահանվում են չորացրած ծիրան, դեղձ, սալոր, կեռաս, թուզ, լոլիկ: Քիչ, թե շատ առևտրային արտահանման առարկա են ծիրանը և տարբեր մրգերի չրերի խառնուրդները. արտահանման գերակշիռ մասն ընկնում է այս երկու խմբերին: Մյուս մրգերի չրերը, բանջարի չրերը, չորացրած բույսերը, կանաչիները և համեմունքները արտահանվում են փոքր քանակներով:

Բաջարեղենի չիրի արտահանումն ավելի փոքրածավալ է՝ արտահանվում են չորացրած տարբեր բանջարներ, բույսեր, ինչպես նաև համեմունքներ: Լոլիկի չիրը նշվում է որպես արտահանման համար խոստումնալից և հեռանկարային ապրանք: Գործարարները նշում են, որ տարիներ առաջ, տեղի են ունեցել լոլիկի՝ համեմատաբար մեծ քանակով արտահանման մի քանի գործարքներ, ինչը սակայն տարբեր պատճառներով չի շարունակվել:⁴ Չիրի առևտրի տեսականու և ծավալների վերաբերյալ մանրամասների համար տես 1-ին աղյուսակը:

Արտահանման փոքրաքանակությունը որպես խնդիր. Փոքրաքանակությունը ընկալվում է այժմ որպես արտահանման խթանմանը խանգարող կարևոր գործոններից մեկը: Այսինքն՝ փոքր քանակը թույլ չի տալիս լուրջ, կանոնավոր առևտրային գործընկեր գտնել արտահանման շուկաներում:

Հայաստանից չիրի գրանցված արտահանման ծավալը փոքր է՝ մի քանի տասնյակ տոննա: Ըստ Հայաստանի ԱՎԾ-ի՝ 2011 թ. արտահանվել է 41.3 տոննա մրգի չիր, որի մեջ 11 տոննան ծիրանի չիր էր, իսկ մոտ 30 տոննան այլ մրգերի՝ **հավանաբար խառնուրդ չիրեր**⁵: 2011թ. արտահանվել է ընդամենը 800 կգ բանջարի չիր (\$ 6'700 արժողությամբ) և ընդամենը 41'300 կգ մրգի չիր (\$ 121'700 արժողությամբ): Չորացրած բանջարեղենի արտահանումը ներառում է փոքր քանակով լոլիկի չիր (5 կգ) և չորացրած տարբեր բանջարեղեն, բույսեր, համեմունքներ (800 կգ):⁶

Արտահանվող մյուս կարևոր ապրանքը չորացրած համեմունքներն են (աղացած, մանրացրած կամ առանց մանրացնելու): 2011 թ. արտահանվել է մոտ 48 տոննա համեմունք, որից 40.2 տոննա (\$275'000 արժողությամբ) սև պղպեղ և մոտ 8 տոննա այլ համեմունքներ (\$121'000 արժողությամբ)՝ գլխավորապես ուրց:

⁴ 2000-ականների առաջին կեսին արտահանվել է տարեկան մոտ 15-20 տոննա լոլիկի չիր, այսինքն՝ մեկ բեռնատար:

⁵ Այստեղ օգտագործվել է «հավանաբար» բառը, որովհետև ԱՊՀ-ի ԱՏԳԱԱ ծածկագրերի համաձայն 08134590 ծածկագրի տակ «խառի փոխարեն» նշված է «այլ մրգերի չիրեր», որոնք չեն ներառում ծիրան, թուզ, սալոր, դեղձ, խնձոր, տանձ:

⁶ Լոլիկի, ինչպես նաև այլ բանջարեղենի արտահանման քանակների վերաբերյալ տվյալները ճշգրտման կարիք ունեն: Հնարավոր է ինչ-որ շփոթություն կա Մաքսային ծառայության և ԱՎԾ-ի տվյալների միջև: Ըստ Բիզնեսի աջակցման կենտրոնի հավաքած տվյալների՝ 2011 թ. արտահանվել է 1 տոննայից ավել լոլիկի չիր, ինչը կնշանակի, որ արտահանված բանջարի չիրը ամբողջությամբ լոլիկ էր («Չորացրած մրգերի ու բանջարեղենի մատակարարման շղթայի գնահատական», 2013 թ.):

Չորացրած միրգ ու բանջարեղենի առևտրի վերաբերյալ մանրամասների համար տես 1-ին աղյուսակը:

Կարևոր է նշել նաև, որ արտահանման քանակի աճի կամ նվազման որևէ կայուն միտում չի նկատվում: Հայաստանում չիրի արտադրությունը և արտահանումը հիմնված է միայն տեղական թարմ հումքի վրա և մեծապես կախված է տվյալ տարվա բերքատվությունից, և արտադրության և արտահանման ծավալները տատանվում են տվյալ տարվա բերքատվության հետ միասին:

Արտահանումը դեռ կանոնավոր առևտրային հիմքերի վրա չէ. Հայաստանից չորացրած միգ ու բանջարի արտահանումն, ըստ էության, կանոնավոր առևտրային հիմքերի վրա դեռ չի դրված: Գլխավորապես արտահանվում է փոքր խմբաքանակներով՝ մի քանի տասնյակ կիլոգրամից մինչև մի քանի հարյուր կիլոգրամ: Արտահանման կանոնավոր գործարքները սակավ են: Գործարքների մեծ մասը անկանոն է, ընդ որում՝ չիր արտահանողների մեծ մասը արտասահմանում փոքր խանութ ունեցող կամ այդպիսի ծանոթ ունեցող հայաստանցի կամ սփյուռքի հայեր են:

Մրգի ու բանջարի չիր արտահանում են նաև ֆիզիկական անձինք՝ փոքր խմբաքանակներով, անձնական սպառման համար, երբեմն էլ վաճառելու համար, որոնք չեն գրանցվում որպես առևտրային արտահանում:

Հարկ է նշել, որ արտահանման գործարքների փոքր թիվն ու անկանոնությունը դժվարացնում են արտահանման ՆՅՈՒՏ ապահովման շղթայում որոշ խնդիրների ու բարելավման հնարավորությունների հստակ հատկորոշումը: Մասնավորապես, գործարքների սակավության պատճառով գործարարները որոշ դեպքերում չեն կարևորում ընթացակարգերի վրա ծախսած ժամանակն ու դրանց պարզությունը կամ հստակությունը:

ԱՂՅՈՒՄԱԿ 1 Չորացրած միրգ ու բանջարի միջազգային առևտուրը 2009-2011 թ.թ.

Ապրանքի ծածկագիր և նկարագիր		ԱՐՏԱՀԱՆՈՒՄ						ՆԵՐՄՈՒԾՈՒՄ					
		2009		2010		2011		2009		2010		2011	
		տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000
0712-Չորացրած բանջարեղեն		0.3	0.7	3.9	4.4	0.8	6.7	41.4	28.47	18.4	48.8	135.6	117.6
07 122000	Գլուխ սոխ	0,0	0,0	0.0	0.0	0.0	0.0	25.6	7.84	4.3	3.35	1.7	3.14
07 123100	Սունկ	0,0	0,0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.59
07 123900	Այլ	0,0	0,0	0.0	0.0	0.0	0.0	1.7	2.35	0.4	1.38	0.1	2.46
07 129011	Եգիպտացորեն (քաղցր)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.074	1.78	0.0	0.0
07 129030	Լոլիկ	0.001	0.08	0.0	0.0	0.005	0.052	0.2	1.25	0.82	3.1	0.0	0.0
07 129090	Այլ	0.31	0.62	0.17	0.68	0.8	6.67	13.8	17.2	12.4	33.37	133.7	111.45
Սև պղպեղ		45.0	231.7	49.0	280.34	40.2	275.0	133.5	396.0	192.1	537.8	227.3	603.9
09 041100		19.0	89.0			5.2	29.1	87.8	276.5			145.3	430.2
09 041200		26.5	142.7			32.1	228.2	5.8	22.15			28.4	86.0
09 042010		0.0	0.0			0.3	1.6	0.0	0.0			0.0	0.0
09 042030		0.0	0.0			0.0	0.0	0.9	4.2			1.1	5.4
09 042090		0.0	0.0			2.5	16.0	39.1	93.2			52.5	82.3
Վանիլ		0.0	0.0	0.0	0.2	0.0	0.0	2.1	17.0	3.5	33.8	4.3	20.6
09 050000													
Դարչին		0.0	0.0	0.0	0.25	0.0	0.0	3.7	8.4	5.3	11.9	5.6	13.36
09 061100													
Մեխակ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.0	4.7	2.3	9.1	2.5	8.76
09 070000													
Մշկրնկույզ, մացիս և հիլ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	3.7	30.5	3.2	38.0	3.4	27.7
09 081000													
Սերմեր. չամանի, գինձի, անիսի		0.5	0.83	0.0	0.0	0.0	0.0	16.2	31.0	14.7	25.2	40.7	59.3
09 091000		0.5	0.83										
Համեմունք		7.7	35.5	10.5	124.6	7.9	121.2	17.7	39.4	67.1	141.7	47.3	108.6
09 1099	ուրց	7.7	35.5										

Գյուղատնտեսության արտահանման ՆՅՈՒՏ ապահովման շղթայի վերաբերյալ հուշագիր. Հայաստան

Ապրանքի ծածկագիր և նկարագիր		ԱՐՏԱՀԱՆՈՒՄ						ՆԵՐՄՈՒԾՈՒՄ					
		2009		2010		2011		2009		2010		2011	
		տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000	տոննա	\$ '000
0813-Չորացրած մրգեր		26.1	64.3	90	133.9	41.3	121.7	135.2	377.26	188.5	597.5	253.7	667.26
08 131000	Ծիրան	8.6	19.5	0.5	7.2	10.6	49.62	46.4	160.1	81.5	319.9	93.8	232.1
08 132000	Դամբուլ(սալոր), prunes	0.5	4.5	0.3	5.2	0.5	6.7	27.4	66.73	72.2	167.9	134.8	357.5
08 133000	Խնձոր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.001	0.19	0.5	2.1	1.0	4.8
08 134010	Դեղձ	0.4	5.2	0.2	4.1	0.4	5.2	19.5	39.38	0.5	2.0	0.3	0.94
08 134030	Տանձ	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.22			0.4	1.5	0.0	0.0
08 134050	Պապայա	0.0	0.0	0.0	0.0		0.0	0.0	0.0	1.8	6.71	1.9	6.78
08 134095	Այլ,	15.0	16.9	88.9	116.5	29.5	59.1	39.3	93.37	29.4	83.1	20.6	56.49
08 135015	Ընկույզների և չոր մրգի խառնուրդ, առանց սալորի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.45	0.0	0.0
08 135019	Ընկույզների և չոր մրգի խառնուրդ, սալորով	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.03	0.2	0.0	0.0
08 135039	Միայն ընկույզների խառնուրդ	0.0	0.0	0.01	0.17	0.0	0.0	0.0	0.0	0.06	0.53	0.0	0.0
08 135091	Ընկույզների և չոր մրգի խառնուրդ, առանց սալորի և թուզի	0.0	0.0	0.01	0.34	0.0	0.0	0.0	0.0	0.6	4.94	0.3	2.25
08 135099	Ընկույզների և չոր մրգի խառնուրդ, այլ	1.5	18.1	0.04	0.3	0.03	0.4	2.7	16.65	1.4	8.1	1.0	6.0
0806-Խաղող, չամիչ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	930.0	1146.0	953.0	1332.5	791.1	1168.5
08 062090	Խաղողի չամիչ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	930.0	1146.0	953.0	1332.5	791.1	1168.5

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արտաքին առևտրի տարեկան հաշվետվություններ

C. Հավաքման և ստանդարտ ապրանքի ապահովման հարցեր

Հումքի առկայություն. Հայաստանում չրի առևտրային արտադրության նպատակով օգտագործվում են մրգի հետևյալ տարատեսակները (սորտերը). ծիրանի համար՝ Սաթենի սորտը, սալորի (դամբուլի) համար՝ Վիկտորիա սորտը:



ՊԱՏԿԵՐ 3. Սաթենի ծիրանը

Չիրի արտադրության համար հարմար սորտերի արտադրության իրական ներուժի վերաբերյալ տվյալներ ներկայում չկան:

Ըստ գործարարների և փորձագիտական գնահատման, Հայաստանում արտադրվող



ՊԱՏԿԵՐ 2. Վիկտորիա սալորը

ծիրանի միայն փոքր մասն է Սաթենի սորտի (մոտ 20 տոկոսը)⁷: Եթե օգտագործենք 2012թ. ծիրանի ամբողջ արտադրության ծավալը (~70'000 տոննա), ապա Սաթենի սորտի թարմ ծիրանի արտադրությունը կկազմի մոտ 14'000

տոննա կգ: Եթե այդ ամբողջ ծավալը վերածվեր չիրի, ապա կարելի կլիներ ստանալ տարեկան մոտ 2'800 տոննա Սաթենի սորտի ծիրանի չիր, հաշվի առնելով, որ Հայաստանում 1կգ ծիրանի չիր արտադրելու համար պահաջվում է միջինում 5 կգ թարմ ծիրան: Եթե դիտարկենք 2000-2012 թ.թ. ժամանակահատվածի ամենաբարձր բերքի տարին՝ 2005, երբ ծիրանի արտադրությունը կազմել է մոտ 100'000 տոննա, ապա Սաթենի սորտի չիրի քանակը կկազմեր 4'000 տոննա⁸: 4'000 տոննա ծիրանի չիրի արժեքը 2011թ. արտահանման միջին գնով (\$4.7-կգ)⁹ կկազմի մոտ 1.9 միլիոն ԱՄՆ դոլար:

Սալորի արտադրության ծավալը տատանվում է 10'000-12'000 տոննա միջակայքում:

Չիր արտադրողները նշում են, որ այսօր չրի արտադրությունը կարելի է մի քանի անգամ ավելացնել եղած հումքի հաշվին, սակայն զգալի առևտրային արտահանում կազմակերպելու համար անհրաժեշտություն կլինի մեծացնելու այդ սորտերի արտադրությունը, հատկապես ծիրանի:

Հումքի մատչելիություն. Հայաստանում թարմ մրգի հավաքման, տեսակավորման և վաճառքի կենտրոնացված պահեստ կամ վաճառակետ չկա. դեռ չի ձևավորվել տարբեր պատճառներով: Միաժամանակ, պայմանագրային հարաբերություններ Չինարի (չիր արտադրողների) և Գեդամի միջև դեռ չեն զարգացել. նրանք գործում են գլխավորապես բանավոր համաձայնություններով: Առևտրային ծավալներով չիր արտադրողների մեծ մասը նշում է, որ ներկա պայմաններում, չիրի համար հումքը իրենք են հավաքում՝ իրենց

⁷ «Մրգերի և բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների ուսումնասիրություն», ԱՄ փարթոգ քոնսալթինգ քոնպանի, 2010թ. դեկտեմբեր:

⁸ Այս հաշվարկը միայն ցուցադրական նպատակ ունի: Հասկանալի է, որ Սաթենի սորտի այգիների տարածքները անփոփոխ չեն. դրանց մեծացման կամ փոքրացման դեպքում համապատասխանաբար կփոխվի նաև արտադրության ներուժը:

⁹ Ըստ ՀՀ ԱՎԾ-ի 2011թ. Արտահանվել է 10.6 տոննա ծիրանի չիր՝ \$49'620 արժողությամբ:

մեքենաներով այցելելով Գեղամի այգի, որպեսզի ապահովեն որ հավաքվում է ճիշտ սորտ և լավ որակ: Դա ավելացնում է հումքի արժեքը¹⁰:

Հաճախ Գեղամը կանխավճար է պահանջում ապրանքը պահելու համար, ինչը ֆինանսական լրացուցիչ պահանջներ է դնում չիր արտադրողների վրա: Գեղամը նախնական ֆինանսավորում է պահանջում նաև չիր արտադրողին հարմար սորտի ծառեր աճեցնելու համար:

Պատրաստի չիրի հավաքման հետ կապված խնդիրներ. Թարմ միրգ ու բանջարի և չիրի արտադրության մասնատված կառուցվածքը բարդացնում և դժվարացնում է փաթեթավորման, փոխադրման, տեղափոխման և վաճառքի կազմակերպման և ՆՅՈՒՏ ապահովման գործը:

Ներկայում չիրի ճյուղում չկա պատրաստի արտադրանքի կենտրոնացված հավաքման, տեսակավորման և վաճառքի պահեստ կամ վաճառակետ: Միաժամանակ, ճյուղում դեռ չկան այնպիսի խոշոր արտադրողներ, կամ կառույցներ, որոնք կկարողանան կայուն, համասեռ որակի մեծաքանակ չիր ապահովել շուկայում:

Այդ պարագայում, արտահանման ՆՅՈՒՏ ապահովման տեսակետից կայուն և համասեռ որակի ապրանքի կուտակումը դառնում է դժվար խնդիր: Արտոյի համար ժամանակատար ու ծախսատար է մեծ թվով փոքր արտադրողների հետ աշխատել և պահանջել ու հետևել, որ նրանք նույն ստանդարտով ապրանք արտադրեն:

Նշանակալի առևտրային արտահանման համար բավարար քանակ կայուն և համասեռ ապրանքի ապահովման ուղիները կարող են տարբեր լինել՝ կախված չիրի արդյունաբերության

Սալիկ 1. Կայուն և համասեռ որակի ապահովման հնարավոր ուղիներ

1. Արտադրողների կազմն ու չափը մնում է մոտավորապես այնպիսին, ինչպիսին կա: Չրագործների միությունը ջանում է ստանդարտներ ձևավորել և նպաստել արտադրողների կողմից դրանց կիրառմանը:
2. Խոշոր արտադրողների (որոնք նաև նաև արտահանող են) ձևավորում, որոնք ներդրումների և թարմ միրգ ու բանջար արտադրողների հետ համագործակցության արդյունքում կապահովեն ապրանքի մեծ քանակ, կայուն ու համասեռ որակ և անվտանգության՝ միջազգային պահանջներին համապատասխանող մակարդակ:
3. Մասնավոր հատվածի կողմից կամ պետություն-մասնավոր համագործակցությամբ չիրի հավաքման կենտրոնի ստեղծում, որը ներդրումների և թարմ միրգ ու բանջար արտադրողների հետ համագործակցության արդյունքում կապահովի ապրանքի մեծ քանակ, կայուն ու համասեռ որակ և անվտանգության՝ միջազգային պահանջներին համապատասխանող մակարդակ: Կենտրոնը կարող է ներգրավվել կամ չներգրավվել արտահանման գործում: Արտոն կենտրոնից կարող է ձեռքբերել չիր և արտահանել:

ձևավորման և զարգացման գործընթացից, ինչպես նաև կառավարության կողմից վարվող ռազմավարությունից և միջոցներից: **Զարգացման հնարավոր երեք ուղիների հակիրճ քննարկում տես 1-ին սալիկում:** Չրագործության ճյուղի և արտահանման հետագա զարգացման արդյունավետ ուղու կամ ուղիների որոշման համար կարևոր է շահագրգիռ կողմերի միջև (ինչպես մասնավոր, այնպես էլ պետական) գործունե երկխոսության կազմակերպումն ու իրականացումը:

¹⁰ Ըստ գործարարների, մեքենայով այգուց այգի գնալ և հումքը հավաքելով հումքի ծախսն ավելացնում մոտ 5 ՀՀ Դրամով՝ յուրաքանչյուր կիլոգրամի համար:

D. Ենթակառուցվածքների, պահպանման և արժեքի ավելացման հարցեր

Արտադրական կարողություններ. Հայաստանում գործում են մոտավորապես 260 չորանոցներ՝ տարեկան ընդամենը 1'500-2'000 տ կարողությամբ:

Օգտագործվող չորանոցների մեծ մասը բարձր արդյունավետության չի:

Սառնարանային տնտեսություն. Չնայած չորացրած միրգ ու բանջարն ավելի երկար կյանք ունեն քան թարմ միրգ ու բանջարը, դրանց արտահանման համար պահանջվում է սառնարանային տնտեսություն ունենալ: Ընդ որում՝ կարևոր է ոչ միայն սառեցվող տարածք կամ սառնարանային տարողություն ապահովել, բայց նաև փաթեթավորման և պահպանման արդյունավետ սարքավորումներ և եղանակներ, որոնցով կարելի է երկար պահել ապրանքը: Փաթեթավորման և պահպանման ժամանակակից սարքավորումներն ու եղանակները թույլ են տալիս չորացրած միրգ ու բանջարը պահպանել երկար ամիսներ: Բարձրորակ սառնարանային տնտեսությունների հիմնադրումն ու պահպանումը պահանջում է մեծ ներդրումներ, և, այդ պատճառով, դրամական միջոցների մատչելիությունը դառնում է կարևոր հարց, հատկապես փոքր արտադրողների համար:¹¹

Պատրաստի չիրը պետք է պահպանվի մաքուր (ախտահանված) սառնարանում՝ +2-6 ջերմաստիճանի տակ, համապատասխան տուփերում:

Համեմատաբար խոշոր չիր արտադրողներն ունեն իրենց սառնարանային տնտեսությունները: Ընդ ուրում՝ ներկայում առկա սառնարանային տնտեսությունների կարողությունների դեռ մոտ կեսն է օգտագործվում: Հաշվի առնելով արտադրության փոքր ծավալները, կարճաժամկետ ապագայում սառնարանային տնտեսությունների պակասի խնդիր չի լինի, սակայն հետագայում արտահանման ծավալների որևէ նշանակալի աճի դեպքում սառնարանային տնտեսությունների սակավություն կարող է առաջանալ:¹²

Փաթեթավորումը դեռ կատարելագործված չէ. Պատրաստի չիրի երկար պահպանման համար դեռ կատարելագործված փաթեթավորումը տարածված չէ: Չկատարելագործված փաթեթավորման տեխնոլոգիաների կիրառությունը կարճացնում է չիրի պահպանման ժամկետը, վատ է անդրադառնում չիրի տեղափոխելիության և անվտանգության վրա, այդպիսով նվազեցնելով դրա մրցունակությունը: Փաթեթավորման վերաբերյալ լրացուցիչ քննարկում տես ստորև՝ 17-րդ էջում:

¹¹ Մույն վերլուծության շրջանակում ենթակառուցվածքների համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել:

¹² Սառնարանային տնտեսության վերաբերյալ լրացուցիչ տվյալներ կան մեր պատրաստած՝ «Թարմ միրգ ու բանջարի արտահանման ՆՅՈՒՏ ապահովման վերաբերյալ հուշագրում»:

E. Տեղափոխման հետ կապված հարցեր

Գյուղարտադրանքի, մասնավորապես միրգ ու բանջարի չիրի արտահանումը պահանջում է ապրանքի տեղափոխման բավականին կատարելագործված համակարգ, որը ներառում է սառնարանով բեռնատարներ մատակարարման շրթայում՝ այգուց բերքահավաքից հետո Գեղամի պահեստ, Գեղամի պահեստից Չինարի արտադրական տարածք ու պահեստ, այնտեղից Արտոյի պահեստ, հետո մաքսային պահեստ և հետագա այլ վայրեր տեղափոխելու համար:

Փոխադրման միջոցներ և ուղիներ. Հայաստանից միրգ ու բանջարի չիրի արտահանման հիմնական փոխադրամիջոցները և ուղիները հետևյալն են.

- Բեռնատար ավտոմեքենաներով¹³ Բագրատաշենի կամ Մեղրու սահմանային կետերով: Բագրատաշենի անցակետով (Հայաստանի հյուսիսում) դեպի Վրաստան, տարանցում Վրաստանով և անցում Լարսի սահմանային կետով դեպի Ռուսաստանյան, Ուկրաինական և այլ շուկաներ: Իսկ Մեղրու (Հայաստանի հարավում) անցակետով արտահանում կատարվում է գլխավորապես դեպի Իրանի շուկա:
- Օդանավով՝ Զվարթնոց օդանավակայանից (դեպի տարբեր ուղղություններ Ռուսաստան, Եվրոպական երկրներ, ԱՄՆ): Զվարթնոցում գործում է նորաստեղծ, բարձրակարգ սառնարանային տնտեսություն (մոտ 140 տոննա տարողությամբ):

Սառնարանով բեռնատարների առկայություն/մատչելիություն. Չիրը բեռնատարով տեղափոխելու համար պահանջվում են սառնարանով բեռնատարներ, հատկապես տարվա ոչ ձմեռային շրջանում:

Հաշվի առնելով չիրի արտահանման գործարքների փոքրածավալությունը, բեռնատարների առկայությունը դեռևս խնդրահարույց չէ Արտոյի համար: Արտահանման գործարքների համար Արտոն առանձին բեռնատար վարձելու կարիք չի ունենում, այլ իր բեռն ուղարկում է այլ բեռների հետ (խառը բեռների ձևավորման և առաքման խնդրի մասին տես ստորև):¹⁴

Խառնակուտակ բեռների ձևավորումը և առաքումը որպես արտահանման խնդիր. Արտահանվող չիրի տեղափոխման հետ կապված խնդիրներից մեկը խառնակուտակ բեռների ձևավորման (այսպես կոչված՝ *գրուպաժի*) և արտահանման ընթացակարգն է:

Արտահանման փոքր ծավալների պատճառով իմաստ չունի ամբողջ բեռնատար մեքենա վարձել, և Արտոն ստիպված է լինում իր բեռը խառնել այլ արտահանողների բեռների հետ, որպեսզի բեռնատարը լրիվ բարձվի: Խառնակուտակ բեռով արտահանելը կապված է մի շարք ղժվարությունների հետ:

¹³ Բեռնատար ավտոմեքենաներով ևս մեկ ուղի կա. բեռնատար ավտոմեքենայով և նավով (մեկից ավելի փոխադրամիջոցներով) Բագրատաշենի սահմանային կետով, այնուհետև տարանցում Վրաստանով դեպի Փոթի կամ Բաթումի նավահանգիստներ և առաքում այնտեղից լաստանավերով դեպի արտահանման շուկաներ՝ Ուկրաինայում Իլյիչովսկ և Ռուսաստանում Նովոռոսիյսկ նավահանգիստներով: Երևանից մինչև Վրացական ամենամոտիկ նավահանգիստ Փոթի ընկած հեռավորությունը 650 կիլոմետր է, իսկ մինչև Բաթումի 720 կիլոմետր: Այս ուղին հատկապես օգտագործվում է, երբ դեպի Ռուսաստան տանող Լարսի սահմանային կետը փակվում է ձյան կամ Վրաստան-Ռուսաստան հակամարտության պատճառով:

¹⁴ Ներկայում Հայաստանում կա մոտավորապես 300 սառնարանով բեռնատար (83 խմ ծավալով և 20–21 տ տարողությամբ). Սառնարանով բեռնատարների մեծ մասը ՏԻԲ (TIR) կարգավիճակով բեռնատարներ են:

Նախ, այդպես արտահանելու ընթացակարգը երկար է և ժամանակի առումով անկանխատեսելի: Խառը բեռ արտահանող, այսինքն՝ բեռնատար գտնելը դժվար է, և հաճախ հարկ է լինում երկար սպասել դրա համար: Այդպիսով Արտոյի համար դժվարանում է իր գործընկերներին ժամանակին ապրանք առաքելը:

Երկրորդ, խառնակուտակ բեռի արտահանումը ներառում է մաքսային հայտարարագրման և մաքսագերծման ավելի բարդ ընթացակարգեր:¹⁵

Երրորդ, խառնակուտակ բեռի դեպքում փոխադրողը հաճախ բեռը հենց նշանակման վայր չի հասցնում, այլ կարող է մաքսագերծում և բեռնաթափում կատարել նշանակման վայրից հեռու: Դա հանգեցնում է լրացուցիչ ժամանակի և ծախսերի:

Փաթեթավորման հարցը. Այժմ Հայաստանում կատարելագործված փաթեթավորման եղանակները տարածված չեն. մեծամասամբ կատարվում է պարզ փաթեթավորում, առանց չիրի պահպանման ժամկետը երկարացնող հատուկ նյութերի (ազոտ գազի) ավելացման: Կարևոր է նշել նաև, որ գազով լցված, հերմետիկ փակված փաթեթները կոյուրինացնեն չիրի փոխադրումը պահպանելով դրա ապրանքային լավ տեսքը և երկարացնելով պիտանիությունը: Այդպիսով զգալիորեն մեծանում է ապրանքի մրցունակությունը: Պարզունակ փաթեթավորումը մեծացնում է տեղափոխման ժամանակ ապրանքի ճխլման և ապրանքի տեսքի ու որակի կորստի հավանականությունը:

Այսօր Հայաստանում կարծես միայն Ջիլ ընկերությունն է օգտագործում փաթեթավորման կատարելագործված (վակուումային տոպրակներով) տեխնոլոգիա:

F. Մաքսային հսկողության հարցեր

Մաքսային ձևակերպումների հետ կապված խնդիրներ դեռ չեն վերհանվել:

Ուշադրության արժանի ոլորտներից մեկը կարող է լինել Մաքսային ծառայության և Բուսասանիտարական հսկողության միջև համագործակցության և տեղեկությունների փոխանակման համակարգի բարելավումը:

G. Տեխնիկական հսկողության հարցեր

Չիրը ենթակա է երկու տեսակի՝ բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության հսկողության. բուսասանիտարական՝ բույսերի կարանտին հիվանդությունների մուտքի կանխման համար, և սննդամթերքի անվտանգության (կամ սանիտարական) հսկողություն՝ միրգ ու բանջարի չիրերի վրա ու մեջ պարարտանյութի և այլ քիմիական նյութերի քանակների նկատմամբ:

Բուսասանիտարական հսկողության հետ կապված հարցեր. Միրգ ու բանջարի չիրը ենթակա է բուսասանիտարական հսկողության (Գյուղ. նախարարի՝ 2007 թ. Օգոստոսի 23-ի թիվ 191-Ն

¹⁵ Գործարարները նշում են գրուպաժի դեպքում Վրաստանում լրացուցիչ վճարներ են առաջանում: Կարիք կա այս հարցը վերստուգելու և պարզաբանելու:

որոշում): Չիրերի բուսասանիտարական հսկողությունն իրականացվում է (մեքենայի բեռնման կետում կամ) սահմանային անցակետում: Միրգ ու բանջարի չիրի արտահանումը կատարվում է համաձայն ներմուծող երկրի, այսինքն՝ արտահանման երկրի, բուսասանիտարական պահանջների: Չիր արտահանելու համար Արտոն պետք է դիմի Բուսասանիտարական տեսչություն (որը գործում է Մննդամթերքի անվտանգության ծառայության կառուցվածքում):¹⁶ Բուսասանիտարական հավաստագիր տրամադրելու համար տեսուչը սովորաբար յուրաքանչյուր դեպքում կատարում է բեռի ֆիզիկական զննում: Բուսասանիտարական հսկողության ընթացակարգը տես 2-րդ հավելվածում:

Ընդհանուր առմամբ, չիր արտահանողները բուսասանիտարական հսկողության ընթացակարգը խնդրահարույց չեն համարում:¹⁷

Հայաստանյան բուսասանիտարական հավաստագիրը ճանաչվում է ԱՊՀ երկրներում:

Սանիտարական կամ սննդամթերքի անվտանգության հսկողության հետ կապված հարցեր.

Միրգ ու բանջարի չիրերը ենթակա են նաև սանիտարական կամ սննդամթերքի անվտանգության հսկողության: Արտահանման երկրները հաճախ պահանջում են ներկայացնել սննդամթերքի անվտանգության կամ սանիտարական (առողջապահական) հավաստագիր՝ տրված համապատասխանության հավաստման պատշաճ մարմնի կողմից:

Սննդամթերքի անվտանգության կամ սանիտարական հսկողության ընթացակարգը հստակ չէ. նմանատիպ հավաստագրում կարող են կատարել ինչպես Սննդամթերքի անվտանգության ծառայությունը, այնպես էլ Ստանդարտացման ազգային ինստիտուտը: Գործարարները նշում են, որ համապատասխանության հավաստագրի համար դիմում են Ստանդարտների ազգային ինստիտուտ և 100% նմուշառում և լաբորատոր փորձաքննություն անցնելուց հետո (այսինքն՝ փորձաքննության է ենթարկվում արտահանվող յուրաքանչյուր խմբաքանակ), մոտավորապես մեկ շաբաթ տևող գործընթացի արդյունքում ստանում են համապատասխանության հավաստագիր: Համապատասխանության հավաստագրի գինը ... ՀՀ դրամ: Միաժամանակ, Սննդամթերքի անվտանգության հսկողության համար պատասխանատու է Սննդամթերքի անվտանգության ծառայությունը:

Այդ իրավիճակի պատճառ կարող է լինել այն, որ համապատասխան կանոնակարգերում¹⁸ հստակ տարանջատված չեն հսկողության գործառույթները համապատասխան մարմինների

¹⁶ Դիմումը պետք է պարունակի տեղեկություններ Արտոյի, արտահանվող ապրանքի ու դրա ծավալի մասին, արտահանման երկրի և նշանակման վայրի մասին, ներմուծողի, արտահանման երկիր մուտք գործելու անցակետի մասին:

¹⁷ Արտահանվող տվյալ խմբաքանակի բուսասանիտարական հավաստագիր տրամադրվում է մաքսային սահմանային անցակետում: Երևանում հավաստագրում կատարում են Չարբախում տեղակայված բուսասանիտարական տեսուչները կամ Զվարթնոց օդանավակայանի տեսուչը՝ օդանավով արտահանելու դեպքում: Երևանի տեսուչները աշխատում են սովորական աշխատանքային ժամերով և օրերին, իսկ Զվարթնոցի տեսուչը աշխատում է 24 ժամ:

Գրուպաժով արտահանման ժամանակ հնարացոր են խնդիրներ բուսասանիտարական հավաստագրման մասով: Օրինակ, եթե չիրը արտադրվել կամ պահեստավորվել է Մեդրիում, սակայն պետք է արտահանվի Բագրատաշենի սահմանային անցակետով, Արտոն հավաստագրի համար հայտ կարող է ներկայացնել և հավաստագիր ստանալ միայն իր բեռը Երևանի սահմանային տեսուչին (Չարբախ) կամ Բագրատաշեն սահմանային անցակետ հասցնելուց հետո: Ընդ որում, եթե հարկավոր լինի նմուշառում և փորձաքննություն կատարել, ապա Արտոն կարող է ստիպված լինել սահմանին սպասել մինչև 5 օր:

¹⁸ Համապատասխանության գնահատման մասին օրենք, Սննդամթերքի անվտանգության մասին օրենք, կառավարության թիվ ... որոշում:

միջև: Հայաստանում միրգ ու բանջարի չիբի համար տեխնիկական կանոնակարգ դեռ չկա: Գործում է այսպես կոչված սննդամթերքի անվտանգության վերաբերյալ ՄԱՆՊԻՆ¹⁹, որտեղ սահմանված են նաև չորացրած մրգերի և բանջարեղենի նկատմամբ անվտանգության պահանջները (ներառյալ՝ թունավոր նյութերի, նիտրատների, պեստիցիդների, ինչպես նաև մանրէաբանական առավելագույն թույլատրելի քանակների ցուցանիշները):

Կ. Անվտանգության և որակի ապահովման հետ կապված հարցեր

Հայկական չրերի մրցունակության և արտահանման խթանմանը նպաստող կարևորագույն գործոններից մեկը արտադրության մեջ միջազգայնորեն ընդունված՝ սննդի անվտանգության կառավարման համակարգերի և ստանդարտների ներդրումն ու կիրառումն է:

Անվտանգության և որակի ապահովման հետ կապված կան մի քանի ասպարեզներ, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում են առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայի աշխատանքի վրա.

- Սննդամթերքի անվտանգության պահանջներ և դրանց համապատասխանությունը միջազգայնորեն ընդունված և(կամ) արտահանման երկրներում գործող պահանջներին.
- Արտադրողների կողմից պատշաճ արտադրական պրակտիկայի, պատշաճ հիգիենայի պրակտիկայի, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի կիրառությունը:
- Միջազգայնորեն ընդունված ստանդարտների կիրառությունը, որոնք սահմանում են որակական պահանջներ, ինչպես, օրինակ՝ խոնավության պարունակությունը կամ չրերում թույլատրելի արատները.
- Հայաստանյան հավաստագրերի ճանաչումը արտահանման երկրների կողմից:

Անվտանգության ապահովման հետ կապված հարցեր. Հայաստանում գործող պահանջները համապատասխանում են ԱՊՀ-ում և ԵՄ-ում գործող պահանջներին (լրացուցիչ մանրամասների ճշգրտման կախրք կա): Դրանք վերաբերում են, մասնավորապես (մանրամասների համար տես՝ հավելված 5).

- ա) հավելանյութերի, չիբի դեպքում գլխավորապես՝ ծծմբի երկօքսիդի առավելագույն թույլատրելի քանակ: ԵՄ-ում գործում է Directive 95/2/EC (ծիրանի, դեղձի, սալորի և թուզի չիբերի և խաղողի չամիչի մեջ՝ 2 գ/կգ, իսկ խնձորի և տանձի չիբերի մեջ՝ 0.6 գ/կգ): Այլ հնարավոր հավելանյութեր, որ կարող են կիրառվել չիբերի արտադրության մեջ. ասկորբենային թթու, գունանյութեր, ցիտրիկ թթու.
- բ) Թույների թույլատրելի առավելագույն քանակներ: ԵՄ-ում գործում է Council Directive 90/642/EEC. Կարևոր է հաշվի առնել, որ թույների թույլատրելի քանակների վերաբերյալ ԵՄ-ի առանձին երկրներ կարող են ունենալ լրացուցիչ պահանջներ.

¹⁹ «Պարենային հուսքի և սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.9-01-2003 ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, Առողջապահության նախարարի հրաման թիվ 181, 2003 թ. մարտի 28:

- գ) աղտոտող այլ նյութերի (մերկուրի, կադմիում, կապար) նկատմամբ պահանջներ. EU Regulation (EC) 466/2001.
- դ) փաթեթավորման նյութերի նկատմամբ պահանջներ.
- ե) պիտակավորման նկատմամբ կիրառվող պահանջներ, մասնավորապես, ապրանքի մեջ կամ վրա հավելանյութերի պարունակության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման պահանջ:

Պատշաճ գործելակերպերի (պրակտիկաների) և անվտանգության կառավարման համակարգերի կիրառման հետ կապված հարցեր. Վերը նշված պահանջները պահպանելու համար հայաստանյան չիր արտադրողներին անհրաժեշտ կլինի ավելի մեծ ուշադրություն դարձնել արտադրության մեջ միջազգայնորեն ընդունված պատճառ գործելակերպեր և անվտանգության կառավարման առաջավոր համակարգեր ներդնելուն:

Սննդամթերքի անվտանգության կառավարման առաջավոր համակարգերի, ինչպես օրինակ՝ Վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (HACCP- Hazard Analysis and Critical Control Point) կամ այլ համակարգերի ներդրումը արտադրողների կողմից կարևոր է ինչպես ապրանքների անվտանգությունն ու մրցունակությունը բարձրացնելու համար, այնպես էլ արտահանման և ներմուծման ընթացքում ապրանքները տեխնիկական հսկողության ավելի պարզեցված ընթացակարգերով անցկացնելու և մաքսագերծելու համար: ԵՄ-ում այդպիսի համակարգերի կիրառությունը պարտադիր պահանջ է:

Այդ համակարգերի ներդրումը ժամանակատար և ծախսատար գործընթաց է: Սկզբնական փուլում պետք է սկսել առնվազն Պատշաճ արտադրական գործելակերպի (GMP-Good Manufacturing Practice) և Պատշաճ հիգիենայի գործելակերպի (GHP- Good Hygiene Practice) ներդրումը և կիրառումը, որոնք ցանկացած անվտանգության կառավարման համակարգի նախապայման են:

Հայաստանյան արտադրողների շրջանում, հատկապես փոքր ու միջին արտադրողների, այդ համակարգերի կամ պատշաճ պրակտիկաների կիրառումը դեռ լայնորեն տարածված չէ: Անհրաժեշտություն կա խրախուսելու և խթանելու դրանց կիրառումը հայաստանյան արտադրողների կողմից: GMP-ի և GHP-ի կիրառումը զգալիորեն կբարելավի սննդամթերքի անվտանգության ներկայիս իրավիճակը չրերի արտադրության ոլորտում:

Որակի ապահովման հետ կապված հարցեր. Խոնավության ցուցանիշներ. ծիրան- 25%, սալոր-25%, խնձոր-20%, չամիչ-17%, թուզ-24%, տանձ-22 % (մանրամասների համար տես՝ հավելված 5):

Ինչպես նշվեց «Հավաքման և ստանդարտ ապրանքի ապահովման հարցեր» բաժնում արտահանման ՆՅՈՒՏ ապահովման տեսակետից լավ և համասեռ որակի արտադրանքի ապահովումը այսօր մեծ խնդիր է և հանդիսանում է արտահանման խթանմանը խանգարող կարևոր գործոններից մեկը: Այդ նպատակով խիստ անհրաժեշտ է միջազգային պահանջներին համապատասխանող ստանդարտների, ինչպես օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) և Codex Alimentarius-ի ստանդարտների ներդրումը և արտադրողների կողմից դրանց կիրառմանը նպաստումը:

I. Ռազմավարության, դրամի մատչելիության և այլ հարցեր

Ագրոբիզնեսի արտահանման խթանման ռազմավարության բացակայություն. այդ ռազմավարության բացակայությունը նշանակում է նաև, որ միավորող հենք ու գործակառույց չկան արտահանման խոչընդոտների նվազեցման կամ վերացման համար, ներառյալ առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայում եղած խոչընդոտները: Դա կարող է տեղի տալ տարբեր մարմինների կողմից հետապնդվող նպատակների բախման, ինչպես նաև դժվարացնել առաջնահերթությունների սահմանման գործը: Ռազմավարությամբ պետք է, այլոց հետ նաև, հասցեագրվեն արտադրանքի արտահանման խթանման հայեցակարգային այնպիսի հարցեր, ինչպես.

- Հումքի և պատրաստի արտադրանքի կուտակման արդյունավետ գործակառույցների զարգացում.
- Սառնարանային տնտեսությունների (թարմ արտադրանքի պահպանման համար) և սառը տեղափոխման շղթայի զարգացում (տեղափոխման և արտահանման համար):

Ինչպես նշվել է վերևում, չրագործության ճյուղի և արտահանման հետագա զարգացման արդյունավետ ուղու կամ ուղիների որոշման համար կարևոր է շահագրգիռ կողմերի միջև (ինչպես մասնավոր, այնպես էլ պետական) գործուն երկխոսության կազմակերպումն ու իրականացումը:

Դրամական միջոցների մատչելիության խնդիր. Չինարը և Արտոն դժվարությունների են հանդիպում ընթացիկ կապիտալի (աշխատող դրամի) պակասի պատճառով, որովհետև Գեղամին վճարում է կանխիկ դրամով: Դրամ գտնելու հարցում Արտոն նշում է հետևյալ խնդիրները. (1) ագրոբիզնեսի բարձր վտանգավորությունը (ռիսկայնությունը), (2) բարձր տոկոսադրույքներն ու կարճաժամկետ վարկեր վերցնելու բարդ ընթացակարգերը, (3) գրավադրման հետ կապված դժվարություններ:

Չինարը և Արտոն նշում են նաև, որ դժվար է դրամ գտնել փաթեթավորման սարքավորումներ, սառնարանային տնտեսության, և արտադրական այլ սարքավորումներ ձեռքբերելու համար:²⁰

²⁰ Թարմ միրգ ու բանջարի արտահանման ՆՅՈՒՏ շղթային ուսումնասիրության ժամանակ գործարարները նշում էին, որ գործող օրենսդրությունը թույլ չի տալի միջազգային լիզինգի գործարքներ իրականացնել, ինչն ավելի է դժվարացնում առևտուրը:

III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ(ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
Արտաքին առևտրի ՆՅՈՒՏ ապահովում						
1	Խառը բեռով(գրուպաժով) արտահանելու հետ կապված խնդիրներ. Արտահանման փոքր ծավալների պատճառով իմաստ չունի ամբողջ բեռնատար մեքենա վարձել, և Արտոն ստիպված է լինում իր բեռը խառնել այլ արտահանողների բեռների հետ, որպեսզի բեռնատարը լրիվ բարձվի: - Արտոն հաճախ ստիպված է երկար սպասել մինչև խառը բեռ տանող կգտի. - Արտահանման երկրում բեռը հաճախ նշանակման վայրից հեռու է բեռնաթափվում. - Կարող է բարդացնել ԲՈՒՍ հավաստագրման ընթացակարգը.	Հանգեցնում է լրացուցիչ դժվարությունների և ծախսերի հետ. Ժամանակատար է և ժամանակի առումով անկանխատեսելի: Բացակաբար է ազդում ճիշտ ժամանակին մատկարարելու կարողության և մրցունակության վրա:	ՀՔ. ուսումնասիրել այժմ կիրառվող` տեղափոխման գործելակերպերը` դրանց արդյունավետացման հնարավորություններ գտնելու նպատակով (գրուպաժ ավտոմեքենայով, օդանավով փոխադրման տարբերակ)	-	Մասնավոր հատվածի կողմից արդյունավետ կազմակերպման խնդիր է: Զրագործների ասոցիացիա	Խառը բեռի արտահանումը ներառում է մաքսային ձևակերպումների ավելի բարդ ընթացակարգեր: ԲՈՒՍ հավաստագիրը տրվում է սահմանային անցակետերում, և որոշ դեպքերում (օրինակ Մեղրուց Բագրատաշենով արտահանելիս) դա կարող է հանգեցնել խնդիրների, հատկապես, եթե փորձաքննության կարիք կա (կարող է տևել մինչև 5 օր):
2	Փաթեթավորման կատարելագործված տեխնոլոգիաների կիրառումը տարածված չէ:	Կարճացնում է չիրի պահպանման ժամկետը, վատ է անդրադառնում չիրի տեղափոխելիության և անվտանգության վրա, այդպիսով նվազեցնելով դրա մրցունակությունը: Մեծացնում է տեղափոխման ժամանակ ապրանքի ճիւլման և դրա տեսքի ու որակի կորստի հավանականությունը:	Ա-1. պատրաստել ուսումնական և տեղեկատվական նյութեր չիր արտադրողների համար ՀՔ-1 մշակել և առաջարկել սարքավորումների ձեռքբերման համար արդյունավետ ֆինանսական գործիքներ	-	Գյուղնախ Զրագործների ասոցիացիա Էկոնոմնախ ՓՄՁ ԶԱԿ	Մասնավոր ներդրման խնդիր է: Գործարարները նշում են պահանջվող ներդրման \$10'000-\$15'000 տիրույթ: Լավ փաթեթավորումը կարող է նպաստել նաև հավաստագրման ընթացակարգերի դյուրինացմանը:
3	Սանիտարական և (կամ) սննդամթերքի անվտանգության ընթացակարգերի անհստակություն: Գործարարները նշում են հավաստագրի ձեռքբերում ինչպես Սննդամթերքի	Կրկնակի ընթացակարգ, ընթացակարգի ձգձգում, լրացուցիչ ծախսեր և անհրամարտություններ:	Ա-1. դիտարկել գործող օրենսդրությունն ու ընթացակարգերը և կատարել համապատասխան փոփոխություններ` ուղղված	IFC-ն կարող է օգնել վերլուծությանը և հնարավոր լուծումների	Էկոնոմնախ ՍԱՕ Ստանդարտացման ազգային ինստիտուտ	Չկա չիրի տեխնիկական կանոնակարգ, սակայն կա ՍԱՆՊԻՆ N 2-III-4.9-01-2003: Իրավական ակտեր. Սննդամթերքի

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ(ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
	անվտանգության ծառայությունից, այնպես էլ Ստանդարտացման մարմնից:		դրանց պարզեցմանը: Հստակեցնել, թե որ մարմինն է կատարում հավաստագրում: Ա-2. Կատարել հետագա վերլուծություն և, եթե հաստատվի կրկնակի ընթացակարգը, վերացնել կրկնողությունը:	մշակմանը՝ արտահանման ՆՅՈՒՏ ապահովման հարցերով:	(ՍԱԲ)	անվտանգության մասին օրենք, Համապատասխանության գնահատման մասին օրենք ԿՈՐ թիվ 1170 (2004, օգոստոսի 12) ԿՈՐ թիվ 1442 (2010 թ. հոկտեմբերի 21) ԿՈՐ թիվ 1449 (2010 թ. հոկտեմբերի 21)
4	Մառնարանային պահեստների կարողության, տեղադրության, մատչելիության խնդիրներ:	Կարող է խոչընդոտել արտահանման ծավալների աճին:	ՀՔ-1. Պարզել, թե արդյո՞ք բավարար կարողություններ կան, և կան զարգացմանը խանգարող իրավական դրույթներ, կամ շուկայի գործոններ	-	-	Կարճ ժամկետի խնդիր չէ: Խնդիր կառաջանա արտահանման ծավալների նշանակալի աճի դեպքում:
5	Գյուղատնտեսական արտահանման խթանման ռազմավարության բացակայություն	Դժվարություններ խնդիրների և միջոցառումների առաջնահերթություններ սահմանելիս:	ՀՔ-1. Կազմակերպել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկում՝ ճյուղի զարգացման և արտահանման խթանման վերաբերյալ (Ա1) Ստեղծել Ագրոբիզնեսի արտահանման խթանման ռազմավարության մշակման Աշխատանքային խումբ: (Ա2) Մշակել չրագործության ճյուղի հետագա զարգացման և արտահանման խթանման ռազմավարություն	IFC-ն կարող է օգնել արտահանման ՆՅՈՒՏ հարցերով:	Էկոնոմնախ (համակարգող) Գյուղնախ ՓՄՁ ԶԱԿ Զրագործների ասոցիացիա	Ներկա փուլում սա հատկապես կարևորվում է նաև այն առումով, որ ճյուղում դեռ կանտնավոր առևտրային արտահանման ծավալների հասնելու խնդիր կա: Ընդ որում, կարևոր է ոչ միայն զուտ արտահանման առնչվող, այլ ճյուղի զարգացման ուղղությունների հետ կապված հարցերի արտացոլումը: Քննարկվել է նաև Թարմ միրգ ու բանջարի արտահանման հուշագրում:
Ագրոբիզնես և սննդամթերքի անվտանգության հարցեր						
6	Անվտանգության ապահովման հարցեր. Պատշաճ արտադրական գործելակերպի (GMP-Good Manufacturing Practice) և Պատշաճ հիգիենայի գործելակերպի (GHP- Good Hygiene Practice) և (կամ)	Բացասաբար է անդրադառնում ապրանքի անվտանգության վրա: Նվազեցնում է ապրանքի միջազգային	Ա-1. պատրաստել ուսումնական և տեղեկատվական նյութեր չիր արտադրողների համար Ա-2. անցկացնել	IFC կօգնի նյութերի պատրաստման և ուսումնավարժանքի իրականացման գործում:	Գյուղնախ ՓՄՁ ԶԱԿ Զրագործների ասոցիացիա ?	

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ(ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
	աննդամթերքի անվտանգության կառավարման առաջավոր համակարգերի, ինչպես օրինակ՝ վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (HACCP- Hazard Analysis and Critical Control Point) կամ այլ համակարգերի կիրառությունը տարածված չէ չիր արտադրողների շրջանում, հատկապես ՓՄՁ-ների.	մրցունակությունը: Բարդացնում է նաև արտահանման և ներմուծման հետ կապված հավաստագրման ընթացակարգերը:	ուսումնավարժական միջոցառումներ չիր արտադրողների համար ՀՔ-1. գնահատել, թե ներդրումային և այլ ինչ պահանջներ կառաջանան արտադրողների առաջ՝ նշված համակարգերը կամ գործելակերպերը կիրառելիս:			
7	Որակի ապահովման հարցեր. միջազգային պահանջներին համապատասխանող ստանդարտների, ինչպես օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) և Codex Alimentarius-ի ստանդարտների բացակայությունը չրերի արտադրության ոլորտում:	Բացասաբար է անդրադառնում ապրանքի որակի վրա: Նվազեցնում է ապրանքի միջազգային մրցունակությունը:	Ա-1. պատրաստել ուսումնական և տեղեկատվական նյութեր չիր արտադրողների համար Ա-2. անցկացնել ուսումնավարժական միջոցառումներ չիր արտադրողների համար ՀՔ-1. գնահատել, թե ներդրումային և այլ ինչ պահանջներ կառաջանան արտադրողների առաջ՝ նշված համակարգերը կամ գործելակերպերը կիրառելիս:	IFC կօգնի նյութերի պատրաստման և ուսումնավարժանք ի իրականացման գործում:	Գյուղնախ ՓՄՁ ԶԱԿ Չրագործների ասոցիացիա ?	
8	Հումքի առկայության հնարավոր խնդիր. Չիրի համար հարմար սորտերի արտադրությունը՝ բավարար կարող է չլինել արտահանման զգալի աճի դեպքում: Տեղեկությունների պակաս աճեցվող սորտերի իրական քանակների վերաբերյալ:	Կարող է խոչընդոտել արտահանման ծավալների աճին, հանգեցնել գների անհիմն աճի:	ՀՔ-1 Ստեղծել անընդհատ թարմացվող տեղեկատվական հենք ՀՔ-2. Արտահանման խթանման համապատասխան ռազմավարական թղթում հասցեագրել անհրաժեշտ սորտերի ապահովմանն առնչվող խնդիրը:	-	-	Կարճ ժամկետի խնդիր չէ: Խնդիր կառաջանա արտահանման ծավալների նշանակալի աճի դեպքում:
9	Չիրի նկատմամբ գործող տեխնիկական պահանջների հետ կապված հարցեր. ա) Հայաստանյան պահանջների՝ միջազգային շուկայում գործողներին համապատասխանություն	Կարող է խոչընդոտել արտահանման զարգացմանը: Կարող է արտահանման շուկաներում նվազեցնել	Ա-1. Վերլուծել չիրի նկատմամբ հայաստանում գործող պահանջների համապատասխանությունը միջազգային պահանջներին	-	Գյուղնախ ՓՄՁ ԶԱԿ	ՓՄՁ ԶԱԿ-ը՝ Արտահանման- ներմուծման ինտերակտիվ քարտեզում նյութ տեղադրելու մասով


	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ(ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
	բ) հայաստանում արտահանման երկրներում կիրառվող տեխնիկական պահանջների և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների պակաս:	ապրանքի մրցունակությունը:	Ա-2. Ստեղծել անընդհատ թարմացվող տեղեկատվական հենք և այն մատչելի դարձնել գործարարների համար: Ա-3 Ինտերակտիվ քարտեզում ավելացնել չիրի մասին նյութ			
Այլ հարցեր						
10	Դրամական միջոցների մատչելիության խնդիր. ընթացիկ կապիտալի պակաս թե՛ ժամանակ, որովհետև Գեղամին վճարում են կանխիկ դրամով:		ՀՔ-1. Արտոյի համար մշակել դրամի մատչելիության ապահովման հատուկ գործիք:		Էկոնոմնախի ՓՄՁ ԶԱԿ	Ճիշտ սորտերի խթանման, փաթեթավորման սարքավորումների, և ավելի բարձրակարգ չորանոցների համար

Այստեղ չեն ներկայացված մի շարք խնդիրներ և հնարավորություններ, որոնք ընդհանուր են թարմ և չորացրած մրգերի համար և արդեն քննարկվել են «Հայաստանից գյուղատնտեսական արտահանման նյութա-տեխնիկական ապահովման շղթայի վերլուծություն. թարմ միրգ ու բանջարեղենի արտահանում», մասնավորապես.

- Լարսի (Վրաստան–Ռուսաստան) անցակետով Ռուսաստան արտահանելիս հանդիպող դժվարություններ
- Ծագման երկրի հավաստագրման (ԾԵՀ) ընթացակարգի հետ կապված խնդիրներ. (1) փաստաթղթային պահանջներ, (2) աշխատանքային ժամեր
- Պարզեցված և հնարավորինս կենտրոնացված ընթացակարգի մշակում և իրականացում, այնպես, որ արտահանողը կարողանա բոլոր բոլոր ձևակերպումները արագ կատարել այցելելով հնարավորին քիչ գրասենյակներ և կատարելով հնարավորին քիչ քայլեր:
- Անբավարար ուշադրություն արտահանման շուկաներում եղած միտումներին ու պահանջարկին, ինչպես նաև բաշխման ցանցերի զարգացմանը և շուկային ընդլայնմանը.

IV. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՔԱՐՏԵԶ



ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստան ներմուծվող և Հայաստանից արտահանվող բույսերը և բուսական արտադրանքը, ներառյալ՝ փայտից պատրաստված ապրանքները և կարգավորվող բուսասանիտարական այլ ապրանքներ (օրինակ՝ թունաքիմիկատներ, պարարտանյութեր և այլն) ենթակա են բուսասանիտարական հսկողության: Դրա նպատակը Հայաստանում բույսերի ու մարդկանց առողջության ու անվտանգության բարձր մակարդակի ապահովումն է:
2. Մրցունակ ապրանք արտահանելու համար կարևոր է նաև մրցակցային հիմունքով ներմուծել հումք (օրինակ՝ սերմեր, տնկիներ) կամ արտադրության համար պահանջվող այլ նյութեր (օրինակ՝ թույներ, դեղեր, պարարտանյութեր, գործիքներ ու սարքեր):
3. Բույսերի և բուսական արտադրանքի ներմուծմամբ և(կամ) արտահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտները պետք է գրանցվեն Բուսասանիտարական պետական տեսչությունում (ԲՈՒՍՊԵՏ) և ձեռք բերեն համապատասխան **բուսասանիտարական հաշվառման վկայական**: Առանց այս փաստաթղթի տնտեսվարող սուբյեկտները չեն կարող ներմուծել կամ արտահանել բույսեր և(կամ) բուսական արտադրանք:

Մարիկ 2.
Հիմնական իրավական փաստաթղթեր

1. Բուսասանիտարիայի մասին օրենք, ընդունված 2006թ. նոյեմբերի 27-ին
2. Կառավարության թիվ 1093-Ն որոշում (2007թ.-ի օգոստոսի 30) Բուսական ապրանքների ներմուծման թույլտվության և ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը և ձևերը հաստատելու մասին:

Հասկացություններ

1. Բուսասանիտարական հսկողության սահմանային կետ
2. Բուսասանիտարական հավաստագիր, ներմուծման կամ արտահանման համար
3. Բուսասանիտարական հաշվառման վկայական
4. Բուսասանիտարական անձնագիր
5. Փորձաքննության լաբորատորիա



Բուսասանիտարական հաշվառման վկայական

Արտահանման ընթացակարգ

4. Բույսեր և բուսական արտադրանք արտահանելու համար արտահանողները բուսասանիտարական հավաստագրի համար պետք է հայտ ներկայացնեն ԲՈՒՍՊԵՏ:



Հայտ արտահանման համար

5. Հայտում պետք է ընդգրկված լինեն հետևյալ տվյալներն ու տեղեկությունները.
 - տեղեկություններ Հայաստանից արտահանողի մասին

- տեղեկություններ ներմուծող (արտահանման) երկրում ներմուծողի մասին
 - ներմուծող երկիրն ու նշանակման վայրը
 - արտահանվող բուսական արտադրանքի նկարագրությունը և ծավալը
 - սահմանը հատելու կետը, որտեղից ապրանքները մուտք են գործելու արտահանման երկիր:
6. Արտահանման բուսասանիտարական հավաստագիրը, եթե փաստաթղթերի ու բեռի զննման ժամանակ խնդիրներ չեն հայտնաբերվում, տրամադրվում է հայտը ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում: Այդ ընթացքում ԲՈՒՍՊԵՏ-ի ծառայողը իրականացնում է խնդրո առարկա ապրանքների ֆիզիկական (արտաքին) զննում և համոզվում, որ դրանք համապատասխանում են ներմուծող (արտահանման) երկրի բուսասանիտարական պահանջներին:
7. Կարևոր է նկատել, որ բուսասանիտարական հավաստագրի հայտ կարելի է ներկայացնել նաև բուսասանիտարական սահմանային հսկիչ կետ: Ընդ որում, համաձայն Կառավարության թիվ 1093-Ն որոշման՝ այդ դեպքում հավաստագիրը պետք է տրվի հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
8. Բուսասանիտարական անձնագիր ներկայացնելու դեպքում բուսասանիտարական հավաստագիրը տրվում է անմիջապես:



▪ **Արտահանման բուսասանիտարական հավաստագիր**

9. Արտահանման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է անվճար:
10. Արտահանման բուսասանիտարական հավաստագիրն ուժի մեջ է 14 օր՝ տրված օրվանից մինչև երկրի սահմաններից դուրս բերելը:
11. Հատուկ ընթացակարգեր կան նաև **սերմերի և տնկիների համար**, որոնց մենք չենք անդրադարձել սույն հուշագրի մեջ:
12. Եթե բեռի անվտանգության հետ կապված որևէ կասկած կա, ապա տեսուչը կատարում է նմուշառում բեռից և նմուշներն ուղարկում բուսասանիտարական լաբորատորիա՝ փորձաքննության համար: Ենթադրվում է, որ բուսասանիտարական տեսչական հսկողության սահմանային կետերը պետք է ունենան փորձաքննական լաբորատորիաներ, սակայն դրանք կամ գոյություն չունեն, կամ թերզինված են և չունեն բավարար կարողություններ՝ պատշաճ փորձաքննություններ անցկացնելու համար:

Ներմուծման ընթացակարգ

13. Բույսերին և բուսական արտադրանքի ներմուծումը թույլատրվում է միայն բուսասանիտարական զննում և ստուգում անցկացնելուց հետո:

14. Բեռի մաքսային ձևակերպումը կատարվում է միայն բուսասանիտարական ստուգումից հետո՝ արտահանող երկրի տված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:
15. Ներմուծման համար բուսասանիտարական հսկողության ենթակա բեռին պետք է ուղեկցի արտահանման երկրի համապատասխան մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագիր, որով հավաստվում է, որ ներմուծվող ապրանքները վարակված չեն վտանգավոր հիվանդություններով և ծագում են կարանտին նշանակության վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից :



Արտահանող երկրի բուսասանիտարական հավաստագիր

16. Ներմուծման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է սահմանային բուսասանիտարական տեսուչի կողմից Բուսասանիտարական հսկողության սահմանային կետում (ՀՄԿ)՝ ներմուծվող ապրանքներին ուղեկցելու և հավաստելու, որ ներմուծվող ապրանքները համապատասխանում են բուսասանիտարական պահանջներին: Բուսասանիտարական տեսչական ՀՄԿ-եր կան սահմանային մաքսային բոլոր կետերում:
17. Ներմուծման բուսասանիտարական հավաստագիր տրամադրելու համար տեսուչը սկզբում ստուգում է ներկայացված փաստաթղթերը, այնուհետև անց է կացնում բեռի ֆիզիկական զննում (բացելով բեռը) (ա) բեռը նույնականացնելու համար և (բ) տեսողական մակարդակով ստուգելու, արդյոք կա որևէ վարակ կամ այլ խնդիր: Եթե խնդիրներ չկան, ապա տեսուչն **անմիջապես** տրամադրում է ներմուծման բուսասանիտարական հավաստագիր՝ բեռն ուղեկցելու համար:



Ներմուծման բուսասանիտարական հավաստագիր²¹

18. Եթե բեռի անվտանգության հետ կապված որևէ կասկած կա, ապա տեսուչը կատարում է նմուշառում բեռից և նմուշներն ուղարկում բուսասանիտարական լաբորատորիա՝ փորձաքննության համար: Մինչև լաբորատոր փորձաքննության արդյունքների ստացումը չի թույլատրվում բեռի ներմուծումը:
19. Ենթադրվում է, որ բուսասանիտարական տեսչական հսկողության սահմանային կետերը պետք է ունենան փորձաքննական լաբորատորիաներ, սակայն դրանք կամ գոյություն չունեն, կամ թերզինված են և չունեն բավարար կարողություններ՝ պատշաճ փորձաքննություններ անցկացնելու համար:
20. **Նկատառում, նշում.** Ըստ փորձագիտական կարծիքի, ներկայումս բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքներ պարունակող բեռների (խմբաքանակների) կեսից ավելին ԲՈՒՄՊԵՏ-ի կողմից ենթարկվում է ֆիզիկական

²¹ Գործնականում, եթե փաստաթղթերն ամբողջական են և զննման ժամանակ վնասակար էակներ կամ մարմիններ չեն հայտնաբերվել, ապա ներմուծման համար նոր ներմուծման հավաստագրի փոխարեն բեռն ուղեկցող՝ արտահանող երկրի հավաստագրի պատճենների վրա դրվում է դրոշմ և կնիք (երկու օջինակ):

ստուգման, նմուշառման ու լաբորատոր փորձաքննության սահմանային մաքսակետերում: Լաբորատոր փորձաքննությունը կարող է տևել մինչև 1 օր, իսկ արժեքը տատանվել՝ 30,000 ՀՀ դրամից (մոտ 82 ԱՄՆ դոլար) մինչև 8,000 ՀՀ դրամ(մոտ 22 ԱՄՆ դոլար):

21. Բավարար զինված ու կահավորված է մայրաքաղաք Երևանի մոտ գտնվող Մերձավանի լաբորատորիան, որը հեռու է սահմանային կետերից: Անհրաժեշտ է դիտարկել՝ (ա) սահմանային հսկիչ կետերի լաբորատորիաների կարողությունների զգալի բարելավումը՝ հնարավորություն տալով դրանց անցկացնել արագ և բարձրորակ փորձաքննություններ, կամ (բ) հիմնվելով վտանգների (ռիսկի) գնահատման վրա, թույլատրել, որ բեռները հասնեն սահմանը, իսկ փորձաքննությունների անհրաժեշտության դեպքում, անցկացնել հետո:
22. **Նկատառում, նշում.** Բուսասանիտարական տեսուչը տրամադրում է ներմուծման բուսասանիտարական հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի (բեռի) համար, այսինքն, յուրաքանչյուր խմբաքանակին պետք է ուղեկցի առանձին հավաստագիր:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՍԱՆՊԻՆ՝ ՄՆԵՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

16 ապրիլի 2003 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ թիվ 10003130

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

28 մարտի 2003 թ.

N 181

ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՄՆԵՂԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄՆԵՂԱՅԻՆ

ԱՐԺԵՔԻՆ ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2-III-4.9-01-2003 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.6. Պտուղ-բանջարեղենային մթերք

Ինդեքս Մթերքի խումբ	Ցուցանիշներ	Թույլատրելի, մակարդակներ, մգ/կգ, ոչ ավելին	Լրացումներ
1.6.1. Թարմ և թարմ սառեցված բանջարեղեն, կարտոֆիլ, բոստանային, մրգեր, հատապտուղներ, սնկեր	Թունավոր տարրեր		
	կապար	0.5	
		0.4	մրգեր, հատապտուղներ
	արսեն	0.2	
		0.5	սնկեր
	կադմիում	0.03	
		0.1	սնկեր
	սնդիկ	0.02	
		0.05	սնկեր
	Նիտրատներ		
	կարտոֆիլ	250	
	կաղամբ սպիտակաթելային վաղ	900	
	կաղամբ սպիտակաթելային ուշ	500	
	գազար վաղ	400	
	գազար ուշ	250	
	տոմատ	150	
	300	պաշտպանված գրունտ	
վարունգ	150		
	400	պաշտպանված գրունտ	
բազուկ	1400		
սոխ գլուխ	80		
սոխ կանաչ	600		
	800	պաշտպանված գրունտ	

	թերթային բանջարեղեն (սպանախ, թրթնջուկ, կաղամբ աղցան տեսակի, մաղադանոս, սալաթ, քարաոզ, սամիթ, համեմ և այլն)	2000	
	պղպեղ քաղցր	200	
		400	պաշտպանված գրունտ
	դդմիկ	400	
	ձմերուկ	60	
	սեխ	90	
	Պեստիցիդներ *		
		0.1	կարտոֆիլ, կանաչ ոլոռ, բագուկ
	ՀՔՑՀ (a -, b -, g- իզոմերներ)	0.5	անկեր, բոստանային բանջարեղեն,
		0.05	մրգեր, հատապտուղներ, խաղող
	ԴԴՏ և դրա մետաբոլիտներ	0.1	
	Ռատիոնուկլիդներ		
կարտոֆիլ	ցեզիում-137	120	Բկ/կգ
	ստրոնցիում-90	40	նույնը
բանջարեղեն բոստանային	ցեզիում-137	120	նույնը
	ստրոնցիում-90	40	նույնը
մրգեր, հատապտուղներ, խաղող	ցեզիում-137	40	նույնը
	ստրոնցիում-90	30	նույնը
վայրի պտուղներ	ցեզիում-137	160	նույնը
	ստրոնցիում-90	60	նույնը
անկեր	ցեզիում-137	500	նույնը
	ստրոնցիում-90	50	նույնը

Մանրէաբանական ցուցանիշներ

1	2	3		5	6	7
		ՄԱՖԱՄ, Մթերքի ԳԱՄ/գ, ՆՅ ավելի	Մթերքի զանգված, որում չի թույլատրվում, (գ)			
		ԱՅԽՄ (կոլի-ձևեր)	Ախտածին, ա/թ սալմոնելներ	Խմորիչներ ԳԱՄ/գ, ՆՅ ավելի	Բորբոսասանկեր ԳԱՄ/գ, ՆՅ ավելի	Լրացումներ
1	2	3	4	5	6	7

1.6.1.1.

Բանջարեղեն և կարտոֆիլ թարմ, թարմ պաղեցված և նրանցից վերամշակված մթերք

- բանջարեղեն թարմ ամբողջական խաշած արագ պաղեցված	1x10 ⁴	1.0	25	1x10 ²	1x10 ²	L.monocytogenes 25 գրամում չի թույլատրվում
- բանջարեղեն թարմ ամբողջական չխաշած	1x10 ^{5*}	0.01	25	5x10 ²	5x10 ²	* կտրտված բանջարեղենի համար,

արագ պաղեցված						այդ թվում խառնուրդներ- 5x10 ⁵
- բանջարեղեն կանաչ և թերթային արագ պաղեցված	5x10 ⁵	0.01	25	5x10 ²	5x10 ²	խաշածներում L.monocytogenes 25 գրամում չի թույլատրվում
- սնկեր արագ պաղեցված խաշած	1x10 ⁴	1.0	25	1x10 ²	1x10 ²	
- կիսապատրաստված- քներ կարտոֆիլից արագ պաղեցված (կարտոֆիլ, գարնի- րային, կոտլետներ և այլն)	5x10 ⁴	0.01	25	1x10 ³	-	
- աղցաններ և խառնուրդներ բան- ջարեղենից խաշած արագ պաղեցված	5x10 ⁴	0.1	25	1x10 ²	1x10 ²	L.monocytogenes 25 գրամում չի թույլատրվում
- կիսապատրաստ- վածքներ բանջարեղենային պյուրեանման արագ պաղեցված	5x10 ⁴	0.1	25	2x10 ²	2x10 ²	սուլֆիդվերար- տադրող կլոստրիդիաներ 1 գրամում չի թույլատրվում
- կոտլետներ բանջարեղենային արագ պաղեցված (կի սապատրաստվածքներ)	1x10 ⁵	0.1	25	1x10 ³	-	
1.6.1.2. Պտուղներ, հատապտուղներ, խաղող արագ պաղեցված և նրանց վերամշակման մթերք						
- պտուղներ սերմային և հարթ կորիզային, արագ պաղեցված	5x10 ⁴	0.1	25	2x10 ²	1x10 ³	
- պտուղներ՝ առանց կորիզների, արագ պաղեցված	5x10 ⁵	0.1	25	5x10 ²	1x10 ³	
- հատապտուղներ թարմ վակուում փաթեթավորմամբ և արագ պաղեցված, ամբողջական	5x10 ⁴	0.1	25	2x10 ²	5x10 ²	
- հատապտուղներ մանրեցված և կտրտված արագ պաղեցված	1x10 ⁵	0.01	25	5x10 ²	1x10 ²	
- դեսերտային ուտեստներ պտուղ-	1x10 ³	1.0	25	1x10 ^{2*}	1x10 ^{2*}	* բորբոսա- խմորասնկերի

հատապտղային արագ պաղեցված						քանակությունը գումարված
- կիսապատրաստված-քներ դեսերտային պտուղ-հատապտղային	1x10 ⁵	0.1	25	1x10 ^{3*}	1x10 ^{3*}	* նույնը
Ինդեքս Մթերքի խումբ	Ցուցանիշներ				Թույլատրելի, մակարդակներ, մգ/կգ, ոչ ավելին	Լրացումներ
1.6.2. Չոր բանջարեղեն, կարտոֆիլ, մրգեր, հատապտուղներ, սնկեր	Թունավոր տարրեր, նիտրատներ, պեստիցիդներ				ըստ կետ 1.6.1.	
	Ռադիոնուկլիդներ					
կարտոֆիլ	ցեզիում-137		600		Բկ/կգ	
	ստրոնցիում-90		200		նույնը	
բանջարեղեն, բոստանային	ցեզիում-137		600		նույնը	
	ստրոնցիում-90		200		նույնը	
խաղող, հատապտուղներ, մրգեր	ցեզիում-137		200		նույնը	
	ստրոնցիում-90		150		նույնը	
վայրի պտուղներ	ցեզիում-137		800		նույնը	
	ստրոնցիում-90		300		նույնը	
սնկեր	ցեզիում-137		2500		նույնը	
	ստրոնցիում-90		250		նույնը	

Մանրէաբանական ցուցանիշներ

Ինդեքս Մթերքի խումբ	ՄԱՏԱՄ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	Մթերքի զանգված, որում չի թույլատրվում, (գ)	Բորբոսասանկեր ԳԱՄ/գ, ոչ ավելի	Լրացումներ	
		ԱՑԽՄ (կոլի-ձևեր)	Ախտածին, ա/թ սալ-մոնելներ		
1.6.2.1. Չոր բանջարեղեն և կարտոֆիլ					
- բանջարեղեն չորացված, չորացումից առաջ չխաշած	5x10 ⁵	0.01	25	5x10 ²	B.cereus 1x10 ³ ԳԱՄ/գ, ոչ ավելի
- չոր կարտոֆիլային պյուրե	5x10 ⁴	0.1	25	5x10 ²	
- կարտոֆիլ չորացված և այլ արմատապտուղներ՝ խաշած մինչև չորացումը	2x10 ⁴	0.01	25	15x10 ²	
- կարտոֆիլային չիպսեր	1x10 ³	0.1	25	-	
- չիպսեր և մզվածքային արտադրանք համեմունքներով	1x10 ⁴	0.1	25	2x10 ²	
1.6.2.2. Չոր մրգեր և հատապտուղներ					
- մրգեր և հատապտուղներ (չիր)	5x10 ⁴	0.1	25	1x10 ²	խմորասնկեր 5x10 ² ԳԱՄ/գ,

					ոչ ավելի
- մրգեր և հատապտուղներ, պտուղ- հատապտղային պյուրե սուբլիմացիոն չորացմամբ	5×10^4	0.1	25	1×10^2	
- ցուկատներ	1×10^3	1.0	25	50	խմորասնկեր 50 ԳԱՄ/գ, ոչ ավելի
1.6.2.3. Չորացված սնկեր	5×10^5	0.001	25	5×10^2	
1.6.2.4. Մանրային խտանյութեր					
- դեներտներ բանջարեղենային և մրգային (ջերմային չորացմամբ)	5×10^3	1.0	25	1×10^2	S.aureus 1 գ և B.cereus 0.1 գ չի թույլատրվում
- բանջարեղենային փոշի (սուբլիմացիոն չորացմամբ)	5×10^4	0.01	25	1×10^2	
Ինդեքս Մթերքի խումբ	Ցուցանիշներ	Թույլատրելի, մակարդակներ, մգ/կգ, ոչ ավելին	Լրացումներ		

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԵՄ –ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՐՈՇ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Maximum allowed values of additives in dry food

Type of product	Additive	Maximum allowed value
Dried Apricots	Sorbic acid and its sodium and potassium salts	1000 mg/kg singly or in combination, expressed as sorbic acid
	Sulphur dioxide	2000 mg/kg
Raisins	Sulphur dioxide (applies to bleached raisins only)	2000 mg/kg
	Mineral oil (food grade)	5 g/kg
	Sorbitol	5 g/kg
Dried Prunes	Sorbic acid and its sodium and potassium salts	2000 mg/kg
	Sulphur dioxide	2000 mg/kg
Dried Figs	Sulphur dioxide	2000 mg/kg
Dried Apples	Sulphur dioxide	600 mg/kg
Dried Pears	Sulphur dioxide	600 mg/kg
Dried Peaches		2000 mg/kg
Dried tomatoes	Sulphur dioxide	200 mg/kg
Dried fruits-general ²²	Hydrogenated poly-1-decene	2000 mg/kg

Allowed moisture content in final products

Type of products	Moisture -maximum allowed value	Mineral impurities	Size
<i>Dried apricots</i>			
Unsulphured not treated with sorbic acid	≤ 22%	1g/kg acid insoluble ash	25 % may be of the next larger or next smaller size and 20 % above this difference
Sulphured and/or sorbic acid treated	≤ 25%		
Rehydrated	≤ 37%		
<i>Dried Grapes</i>			
Malaga Muscatel type	13-31%	0,1g/kg of weight	
With seed	23%		
Seedless	18%		
<i>Dried Apples</i>			

²² As glazing agent

untreated dried apples	22%		Minimum size is 23 mm. The thickness of slices/rings and pieces may not exceed 7 mm. The difference between the diameters of the largest fruit and the smallest fruit shall not exceed: 20mm for wholes and halves 10mm for slices.	
with preservatives or preserved by other means (e.g. pasteurization)	25%			
Dried Figs				
without preservatives	26%	1g/kg of weight	<i>Numbers tolerated</i>	<i>Difference in gr between the smallest and the biggest in 1 kg</i>
with preservatives	30%			
			1-2 3-6 7-9 10-11	12 10 8 6 Not more than 20% exceeding the range above
Dried Peaches				
without preservatives	20%		Optional (but only 2/kg may be smaller/greater than average or if sized in diameter of units then only 10 units difference is allowed)	
with preservatives or preserved by other means (e.g. pasteurization)	20-37%			
Dried Pears				
without preservatives	22%			
with preservatives or preserved by other means (e.g. pasteurization)	26%			
high moisture dried pears provided they are labeled as soft fruit and treated with preservatives or preserved by other means (e.g. pasteurization)	26-40%		The minimum size for whole and halves both peeled and unpeeled is 18 mm. The maximum difference between the diameters of the largest and smallest fruit in any package is 20 mm.	
Dried Prunes				

without and with preservatives	≤ 35%		Europe Designation	Number in 500 g
			Giant	44
			Very large	44- 55
			Large	55 - 66
			Medium	66 - 77
			Small	77 -99
			Very Small	>99
			US Designation	Number in 500 g
			Jumbo	28
			Extra large	28- 44
			Large	44 - 66
			Medium	66 - 94
			Small	94 -110
			Pitted prunes ²³ Class 1	Large and medium 67/500gr
			Pitted prunes Class 2	Optional
<i>Dried Tomatoes</i>				
High moisture	25-50%		Optional	
Regular moisture	18-25%			
Reduced moisture	12-18%			
Low moisture	6-12%			

²³ Pitted prunes- without stones